№ 172 ԿԻՐԱԿԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2 | 1907 | ԿԻՐԱԿԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2 № 172

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ" Базарная ул. д. Тамамшева № 16. կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՊԵՐՃ ՊՌՕՇԵԱՆԻ

Թաղումը տեղի կունենայ այսօր, դեկտեմբերի 2-ին: Պատարագի սկիզբն է առաւօտեան ժամը 10-ին Վանքի աւագ եկեղեցում: Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը: 3—3

ԿՈՉ

ՀԱՆԳԱՆԱԿԻՉ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻ

Ի նպաստ Թիւրքական Հայաստանի տառապեալ հայերի

Վերջին ժամանակներս Թիւրքական Հայաստանի ամեն կողմերում տիրում է սարսափելի կարօտութիւն, որ առաջ է եկել հունձքի պակասութիւնից, բնական աղէտներից, ինչպէս են երկրաշարժը, հրդեհը և այլն, և ընդհանրապէս երկրի տնտեսական վերին աստիճանի աննպաստ պայմաններից:

Ամենայն Հայոց հանգուցեալ Կաթողիկոս Խրիմեան Հայրիկը, ի նկատի ունենալով Թիւրքական Հայաստանի հայ ժողովրդի այդ ողբալի դրութիւնը, միջնորդութիւն էր յարուցել Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկովի մօտ, որպէսզի թոյլատրվի ընդհանուր հանգանակութիւն բանալ ի նպաստ Թիւրքական Հայաստանի մեր սովեալ և բազմակարօտ եղբայրներին: Փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկով 1907 թ. հոկտ. 17 թւակիր և № 22311 իր գրութեամբ յայտնել է Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին, որ ներքին և արտաքին գործերի մինիստրների համաձայնութեամբ արտօնում է հանգանակութիւն այս նպատակով և հաստատում է հանգուցեալ Կաթողիկոսի կողմից առաջարկված Հանգանակիչ Մասնաժողովը, որ գտնվում է Թիֆլիսում (այս Մասնաժողովը ընտրվեց և հաստատվեց կաթողիկոսական կոնդակով այս տարվայ մայիսին) և բաղկացած է հետեւեալ անձերից՝—պ. պ. Առաքելեան Համբարձում, Արասխանեան Աւետիք, Արղութեան իշխանուհի Սոֆիա, Կաֆեան Գաբրիէլ, Ջալէն Տիգրան, Մարտիրոսեան տիկին Հայկանոյշ, Մելիք-Ազարեան Ալէքսանդր, Յարութիւնեան Սամսոն, Սարուխանեան Առաքել, Ստեփանեան բժիշկ Կարապետ, Վերմիշեան Քրիստափոր և Քալանթար Ալէքսանդր:

Հանգանակիչ Մասնաժողովը ընտրել է իր դիւանը, այն է՝—Ալէքսանդր Մելիք-Ազարեան՝ նախագահ, Սամսոն Յարութիւնեան՝ փոխ-նախագահ, Առաքել Սարուխանեան՝ գանձապահ և Համբարձում Առաքելեան՝ քարտուղար:

Հանգանակիչ Մասնաժողովը այժմ, սկսելով իր գործունէութիւնը, դիմում է հայ հասարակութեան բոլոր խաւերին և կոչ է անում չը զլանալ իր նպաստները՝ Թիւրքական Հայաստանի բազմադիմի աղէտներից տառապող և կարօտութեան վերջին ծայրը հասած հայ ժողովրդին:

Մասնաժողովի բոլոր անդամներն ընդունում են իրանց մօտ նուիրաբերութիւններ: Օտար քաղաքներից նուէրներ կարելի է ուղարկել Մասնաժողովի գանձապահի անունով, որի հասցէն է՝—Тифлисъ, въ Правленіе общества А. И. Манташевъ и К-°., А. Саруханіанъ.

Ստացված նուիրատուութիւնների և Թիւրքական Հայաստան ուղարկված դրամական նպաստների մասին պարբերաբար հաշիւ կը ներկայացվի հասարակութեան լրագրութեան միջոցով:

ՊԵՏԱԿԱՆ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԱՆՆԵՐԸ

Կատարում են

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Դրամագլուխների ապահովագրութիւն 25 րուբլուց սկսած մինչև 5000 ր. մահվան դէպքում:

Կենսաթոշակների ապահովագրութիւն 6—600 ր. տարեկան՝ ստանալու դէպքում:

Օժիտի եւ թոշակների ապահովագրութիւն երեխաների համար: Բանւորների կամ ծառայողների միացեալ ապահովագրութիւն ձեռնտու պայմաններով:

Մահվան դէպքում և խառն ապահովագրութիւն կապվում է առանց բժշկական վկայականի, որով ապահովագրութեան առաջին երեք տարիների ընթացքում, ապահովագրվողի մահվան դէպքում վճարած գումարները վերադարձվում են (5%-ը հանվում է գործավարելու համար). չորրորդ տարում մեռնելու դէպքում՝ ապահովագրած դրամագլխի կէսը, հինգերորդ տարում՝ դրամագլխի 3/4-ը, հինգ տարի անցնելուց յետոյ մեռնելու դէպքում՝ դրամագլուխը տրվում է ամբողջովին: 3000 ր. աւելի ապահովագրութեան ժամանակ յիշեալ ժամանակամիջոցները երկարում են 2 տարով:

ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ՏԱՐԻՖՆԵՐ

Պրէմիաների վճարումը կէս տարով, մի քառորդ տարով և փոխադրութիւն խնայողական տետրակից—կառավարական, հասարակական եւ նման հաստատութիւնների ծառայողների համար, ինչպէս եւ ամեն ամսվայ ռոճիկներից գանձապահների (կազնաչէյ) միջոցով: Մանրամասն տեղեկութիւններ կարելի է ստանալ Պետական Բանկի բաժանմունքի և գրասենեակներին կից գտնվող պետական խնայողական գանձարաններում, մաքսատներում, պետական գանձատներում և մայրաքաղաքների գանձարաններում:

Թիֆլիսում Պետական Բանկի բաժանմունքում (Ֆրէյլինսկայա փող., Սոլոլակսկի փող. անկիւն) և գանձարանի բաժանմունքներում՝ Նիկոլաեւսկի փող. տուն № 44 եւ Օլգինսկի փող., կից զինւորական ճանապարհային դատարանի, տ. № 46. Պետական գանձատանը եւ մաքսատանը:
աո. 3—3

ԵՂԲ. ՄԵԼԻՔ-ՄԱՐՈՒԹԵԱՆՆԵՐԻ

← ԹԻՖԼԻՍՈՒՄ →

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ

Խ. և Մ. ՄԵԼԻՔ-ՄԱՐՈՒԹԵԱՆՆԵՐԻ

յայտարարում է ի գիտութ. յարգելի վաճառականների, որ նրա
Մօսկվայի խանութում
վաճառվում են մեծ քանակութեամբ
ԳԱԼԱՆՏԵՐԷՅՆԻ
զանազան ապրանքներ: Գները շատ մատչելի են: Պատուէրները կատարվում են անյապաղ և ամենայն ճշտութեամբ:

Հասցէն՝ МОСКВА, Никольская улица, домъ графа Шереметьева, Торг. домъ
„Бр. Х. и М. Меликъ-Марутянцъ"

← ՄՕՍԿՎԱՅՈՒՄ →

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Թիֆլիսի ժողովարանի աւագների խորհուրդը յայտնում է ի գիտութիւն պ. պ. անդամների և կանդիդատների, որ ներկայ դեկտեմբերի 10-ին, երեկոյեան ժամը 9-ին, նշանակված է ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ, քննելու՝ ամենայն հայոց հանգուցեալ կաթողիկոս Մկրտիչ I-ի անունով թոշակ հիմնելու, ժողովարանի կառավարչի, արտելշչիկի և հաշուապահի պաշտօններ հաստատելու, բուֆետչիկի հետ պայմանները վերանորոգելու, անդամներից մէկի անկանոն գործունէութիւնները և մի քանի այլ տնտեսական հարցեր:

դ. 2, 4, 10. 1—3

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Թիֆլիսի Ժողովարանի Աւագների Խորհուրդը տեղեկացնում է ի գիտութիւն պ. պ. անդամների և փոխ-անդամների, որ առաջիկայ 1908 թւականի անդամակցական և փոխ-անդամակցական տոմսակների վերաբերմամբ Խորհուրդը խիստ կերպով վարվելու է Ժողովարանի կանոնադրութեան § 15-ի համաձայն, որի հիման վրա այն անդամներն ու փոխ-անդամները, որոնք չեն վճարում իրանց մուտքի տոմսակները մինչև դեկտեմբերի 15-ը, համարվում են Ժողովարանից յօժարակամ հեռացողներ, բայց կարող են տարվայ ընթացքում վերստին մտնել՝ վճարելով 24 րուբլի:

(դ. 2, 4, 6) 1—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Շտապեցէք օգնել. Հայ գրական գործողի վիճակը. Վերջին տեղեկութիւններ. Պերճ Պռօշեանի մահվան առիթով. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Նա գնում էր մեռնելու. Դատաստանական դահլիճից. Բօլիշեվի միջադէպի առիթով. Պետական Դումայի նոյեմբերի 17-ի նիստը. Հացի մատակարարութեան խնդիրը. Ղափանի ցուեցից. Համանբէկ Մելիքով. Մի սիրուն գործ. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ. Մամուլ. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Արտասահմանի հայերի կեանքից. Նամակ Պարսկաստանից. Նամակ Անգլիայից. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Ցերեկութիւններ:

ՇՏԱՊԵՑԷՔ ՕԳՆԵԼ

Թիւրքաց Հայաստանի տառապեալ հայ ժողովրդին օգնելու համար հաստատված Հանգանակիչ Մասնաժողովը «Մշակի» այսօրվայ համարի մէջ տպված իր կոչով յայտնելով իր գործունէութեան բացումը՝ յորդոր է կարդում հայ հասարակութեան բոլոր խաւերին շտապել օգնել Հայաստանի տառապեալ, սովատանջ և բազմաչարչար հայ ժողովրդին:

Սա առաջին անգամն է, որ մենք ռուսահայերս հնարաւորութիւն ենք ստանում լեգալ, օրինական ճանապարհով նիւթական օգնութիւն հասցնել մեր դժբաղդ եղբայրներին, օգնութիւն, որի միակ դրդիչը մարդասիրական և եղբայրական զգացումն է և ոչ մի քաղաքական շարժառիթ չէ պարունակում իր մէջ:

Տասնեակ տարիներով հայութեան լաւագոյն ույժերը ձգտում էին հնարաւորութիւն ստանալ օրինական, լեգալ ճանապարհով Թիւրքիայի իրանց թշուառ եղբայրներին օգնութեան հասնել բնական և այլ աղէտների դէպքում: Սակայն Կովկասում տիրող նախկին րեժիմը, որ իր սուր արտայայտութիւնը գտաւ Գոլիցինի իշխանութեան օրով, ի չիք էր դարձնում բոլոր ձգտումները, և բնական է, որ այդ ձգտումները իրանց գոհացումն աշխատում էին գտնել անլեգալ ճանապարհով, մի ճանապարհով, որ խուսափում էր հասարակական քննադատութիւնից և կոնտրոլից:

Այսօր, շնորհիւ հանգուցեալ կաթողիկոսի միջնորդութեան, շնորհիւ Կովկասի Փոխարքայ Վորոնցով-Դաշկովի համակրական վերաբերման դէպի այդ միջնորդութիւնը և գուցէ նաև շնորհիւ քաղաքական փոխված հանգամանքների, Ռուսաստանի հայութիւնը լիակատար հնարաւորութիւն է ստանում իր եղբայրական և մարդասիրական զգացմանց զեղումներին ընթացք և գոհացումն տալ բոլորովին լեգալ և օրինական ճանապարհով:

Ի՞նչ էինք խնդրել մենք, ռուսահայերս, ինչ էր խնդրել հայոց եկեղեցու հովուապետը: Թոյլ տալ մեզ եղբայրական օգնութիւն հասցնել Թիւրքիայի մեր դժբաղդ, աղէտահար և տառապեալ եղբայրներին, արիւնակիցներին: Եթէ օտարազգիները, եւրոպացիները, ի լուր այդ աղէտների, ի լուր հայերի կրած թշուառութեան և զրկանքի արգահատանք և կարեկցութիւն են ցոյց տալիս, ևս առաւել մենք հայերս, նրանց արիւնակիցները, իրաւունք և սեպուհ պարտականութիւն ունենք մեր ունեցածից մասն և բաժին հանել մեր սովեալ, տառապեալ եղբայրներին և մեր լուման ձգել ընդհանուր գանձանակի մէջ:

Մեր ձայնը լսվեց. մեր արդար պահանջը, խնդիրքը գոհացումն ստացաւ. մեզ թոյլատրվեց կատարել մեր ազգային, եղբայրական և մարդասիրական պարտականութիւնը:

Եւ մենք չը պէտք է թերանանք մեր այդ մեծ պարտականութեան մէջ. մենք պէտք է շտապենք կատարել այդ պարտականութիւնը: Կարիքը ահագին է, սովը տանջում է մեր դժբաղդ եղբայրներին, մանաւանդ Հայաստանի դժնդակ ձմրան ժամանակ, և մեր օգնութիւնը կարող է հազարաւոր կեանքեր փրկել, հարիւրաւոր օրեր պահպանել:

Եթէ մինչև այսօր շատերը չէին կատարում իրանց պարտականութիւնը՝ չը կամենալով դիմել անլեգալ ճանապարհի կամ վստահութիւն չունենալով՝ թէ այդ ճանապարհով, որ դուրս է հասարակական կոնտրոլից, իրանց օգնութիւնը և լուման կարող է նպատակին ծառայել, այսօր այլևս չը կայ այդ առարկութիւնը և խղճի հանգըստացման պատրուակը:

Ուստի և մենք ամենայն իրաւունքով կոչում ենք. Ռուսաստանի հայեր, հայ ժողովրդի բոլոր խաւեր, շտապեցէք կատարել ձեր եղբայրական և մարդասիրական պարտականութիւնը. շտապեցէք ձգել ձեր լուման գանձանակի մէջ. շտապեցէք նպաստել Հանգանակիչ Մասնաժողովին՝ պատւով և եռանդով կատարելու իր վրա դրված ծանր և պատասխանատու, բայց վեհ միսիան:

«Մշակն» ևս, ինչպէս միշտ, նոյնպէս և այս դէպքում, պատրաստ է ստանալ նուէրները և հասցնել Մասնաժողովին:

Հ. Առաքելեան

ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂԻ ՎԻՃԱԿԸ

Պռօշեանը մեռաւ ծեր հասակում, 70 տարեկան:

Գրական առաջին երեխայրիքը նա տուեց քսաներկու-քսաներեք տարեկան հասակում:

Եւ այնուհետև քառասուն եօթ տարվայ ընթացքում նա տուեց մի շարք երկասիրութիւններ թէ խոշոր և թէ փոքր, թէ ինքնուրոյն և թէ թարգմանական:

Նա աշխատասէր մարդ էր, չէր սիրում ձրիակերութիւն, անդադար աշխատում էր և միշտ գործ էր պահանջում կատարելու: Նա դիմում էր թէ հիմնարկութիւններին և թէ մասնաւոր անձերին աշխատանք գտնելու և նրանով իրան ապահովելու:

Եւ չը նայելով թէ իր թողած երկասիրութիւններին և թէ մշտական ամեն տեսակ աշխատանքին, դարձեալ նա միշտ կարիքի մէջ, դարձեալ անապահով էր:

Հայ ընթերցողները դեռ շատ փոքր թիւ են կազմում: Հայ գրականութիւնը դեռ շատ թոյլ է վարձատրում գրողի աշխատանքը: Եւ գրական գործողը զրկված է իր գրական աշխատանքով ապրելու հնարաւորութիւնից:

Եթէ մեծ լինէր հայ ընթերցող հասարակութեան շրջանը, եթէ ընթերցողները լինէին ոչ թէ հազարներ, այլ տասնեակ հազարներ, այն ժամանակ, որքան էլ այժմէութիւնը կորցրած լինէր հեղինակի այս ու այն երկասիրութիւնը, այնուամենայնիւ միշտ կը գտնվէր համակրողների մի ստուար շրջան, որը իր ընթերցասիրութեամբ կապահովէր հեղինակին:

Նոյնիսկ Աբովեանի «Վէրք Հայաստանի» և Պռօշեանի «Սօս և Վարդիթէրի» նման հեղինակութիւնները անկարող են եղել երեք-չորս հրատարակութեամբ սպառվել մեր սակաւածաւալ ընթերցող հասարակութեան շրջանում:

Եւ մի ծերունի գրող, որ տուել է մի քանի խոշոր գործեր և միշտ պատրաստ է եղել կատարելու գրական ամեն մի աշխատանք, քառասունեօթ տարի գրականութեան ասպարէզում գործելուց յետոյ գերեզման է իջնում, չունենալով մխիթարութիւն՝ թէ հայ գրականութիւնը կարող է ապահովել իր աշխատաւորին:

Խնդիրը միայն Պռօշեանին չէ վերաբերում, որպէսզի վէճեր առաջ գային թէ նրա գրուածքները կարող էին համակրողներ և չը համակրողներ ունենալ: Ոչ: Ծերունի վիպագիրը չէր կարող գերեզմանի շեմքին մխիթարվել նոյնիսկ նրանով, որ գոնէ ուրիշները, նրա ժամանակակից բեղմնաւոր և երիտասարդ գրիչները վճռած լինէին հարցը գրական կերպով և կարողանային հանդէս գալ իբրև գրական մարդիկ՝ ապահովված իրանց գրական աշխատանքով:

Եւ այսօր, երբ հողին է յանձնվում երկարամեայ գրական մի այնպիսի աշխատաւոր, ինչպէս Պռօշեանը, հարց է ծագում, թէ միթէ գրական աշխատանքի բաղդը պէտք է դեռ երկար մնայ իր այս անմխիթար դրութեան մէջ:

Դա մի էական և խոշոր խնդիր է՝ դրված մեր հասարակութեան առաջ:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ: Թագաւոր Կայսրը հրամայեց պալատում 24 օր սուգ պահել Օսկար թագաւորի մահվան առիթով:

Թէհրան: Երէկ, նոյեմբերի 29-ին, Թաւրիզում սպանվեց ոստիկանութեան պետը:

Ստոկհօլմ: Օսկար թագաւորի մահվան առիթով, Նօբէլի մրցանակները տրվեցին առանց սովորական հանդէսի: Ֆիզիկայի համար ստացաւ Միխէլսօնը (Չիկագօ), քիմիայի համար՝ Բիւխները (Բերլին), բժշկականութեան համար՝ Լավէրօն (Պարիզ), գրականութեան համար՝ Կիպլինգը (Լօնդօն):

Կ. Պոլիս: Հիւպատոսների տեղեկութիւնների համաձայն, Էրզրումում իրերի դրութիւնը բաւականաչափ լաւացել է 60 մահմեդականներին ձերբակալելու շնորհիւ: Այժմ իշխանութեան ձեռքումն են մահմեդական կոմիտէտի համարեա բոլոր պարագլուխները:

Չէրնօգօրսկի սահմանագլխին, Բէրանէի և Պլավայի միջև, նոյեմ. 23-ից զանազան տեղերում ընդհարումներ են տեղի ունենում:

Օդեսսա: Շրջանի զօրքերի հրամանատարը զինւորական դատարանին յանձնեց 50 զինւորներին, որոնք մեղադրվում են ապստամբութեան մէջ:

(«Կ.»)

ՊԵՐՃ ՊՌՕՇԵԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

«Մշակի» խմբագրութիւնը ստացաւ հետեւեալ հեռագիրը.

Մօսկվա, 1 դեկտեմբերի: Խորապէս ցաւում եմ մեր ժողովրդական կենցաղի վէպի լաւագոյն ներկայացուցչի մահը:

Պրոֆեսոր՝ Խալաթեան

Թիֆլիս, 30 նոյեմբերի: Մենք, թիֆլիսաբնակ գանձակեցի արհեստաւորներս,

դամնագին ողբում ենք մեծ վիպասան Պերճ Պռօշեանի մահը։

Մ. Դարչինեան, Վ. Յովհաննիսեան, Վարդ. Յովհաննիսեան, Մ. Վարդապետեան, Մ. Մատինեան.

—

Նուխի, 1 դեկտ. 11 ժ. 35 ր.

Նուխու հայ դպրոցների հոգաբարձուների և ուսուցիչների արտակարգ խառը ժողովը, որ տեղի ունեցաւ նոյեմբերի 30-ին, յարգեց ուսուցիչ Պռօշեանի յիշատակը ոտքի կանգնելով և յայտնելով իր ցաւակցութիւնը, ընտրեց իր կողմից ներկայացուցիչ թաղման հանդէսին ժողովրդական գրող Ռուբէն Խանազատեանին։

Ժողովի Նախագահ՝ Սարգիս Խանոյեան

—

Թիֆլիս, 1 դեկտ.: Խորագոյն ցաւակցութիւն եմ յայտնում, ողբում եմ նախկին ուսուցիչ Պռօշեանի մահը։ Վաղը նշանակված է հոգեհանգիստ։

Սուքիասեան քահանայ

—

Թիֆլիսի Հայուհեաց Բարեգ. ընկերութեան վարչութիւնը խորապէս վշտացած տաղանդաւոր հայ վիպագիր և հասարակական գործիչ Պերճ Պռօշեանի մահվամբ, ուղարկում է յարգելի ժամանակողովին իր լուման՝ քառասնիվ թողող րուբլի, միացնելու այն գումարին, որ հաւաքվում է նրա թաղման ու մահարձանի համար։

Նախագահ՝ Վ. Ռօտինեանց
Անդամ-քարտուղար՝ Ս. Յարութիւնեան

—

Թաղման կարգադրիչ յանձնաժողովին.

Էջմիածին, 1 դեկտեմբերի։ Տեղացի երիտասարդութիւնը և յարգողները խորին ցաւակցութիւն են յայտնում պատուարժան գրականագէտ, հասարակական գործիչ, ազգային ինքնագիտակցութեան նախանձախնդիր, կուլտուրական զարգացման գաղափարին անկեղծօրէն նուիրված Պռօշեանի մահվան առիթով։ Վաղը նշանակված է հոգեհանգիստ։

Օհանջանեան

—

Պետերբուրգ, 30 նոյեմբերի։ Պետերբուրգի հայ ելևեցիների խորհուրդը խորին վիշտ է յայտնում Պռօշեանի մահվան առիթով, յանձին որի հայկական գրականութիւնը կորցրեց իր ծերունի շնորհալի գրող-աշխատաւորին, ժողովրդական կրթութեան գործին անկեղծ նուիրվածին։

—

Երեւան, 30 նոյեմբերի։ Երևանի հայոց թեմական դպրոցի հոգաբարձութիւնը իր խորին վիշտն է յայտնում դպրոցիս նախկին դաստառ, հայ տաղանդաւոր վիպասան Պերճ Պռօշեանի մահվան առիթով։ Թաղմանը ներկայացուցիչ ընտրվեց Զախմախսազեանը։

Հոգաբարձութիւն

—

Շուշի, 30 նոյեմբերի։ Պատուարժան Պերճ Պռօշեանի՝ հայկական գրականութեան տաղանդաւոր աշխատաւորի, դպրոցական գործի ասպարէզում արդիւնաւէտ գործչի մահվան առիթով թեմական դպրոցի հոգաբարձութիւնը իմ հետ միասին ցաւակցութիւն է յայտնում։ Վաղը կը կատարվի հոգեհանգիստ իմ կարգադրութեամբ։

Աշոտ եպիսկոպոս

—

Ելենովկա (Երևան նահ.)։ Սևանի վանքի միաբանութիւնը իր խորագոյն ցաւակցութիւնն է յայտնում հեղինակ, ուսուցիչ և տեսուչ Պռօշեանի մահվան առիթով։

Սարգիս եպիսկոպոս

—

Նոր-Բայազետ, 1 դեկտեմբերի։ Նոր-Բայազէտը ի պատիւ արժանաւոր գրականագէտ Պռօշեանի հոգեհանգիստ կը կատարէ։

—

Թաղմանը ներկայ լինելու համար ընտրեցինք Խորէն վարդ. Մուրադբէգեանին և Հայկարամ Տէր-Միքայէլեանին։

Քաղաքային աւագ՝ Բատիկեան

—

Ախալքալաք, 1 դեկտեմբերի։ Խորապէս վշտակցում ենք հայ գրող, հասարակական գործիչ Պռօշեանի մահվան առիթով։

Հայոց ծխական դպրոց

—

Կարս, 1 դեկտեմբերի։ Հայոց դպրոցի հոգաբարձութիւնը իր խորին ցաւակցութիւնն է յայտնում պատուարժան գրող և հայկական մատաղ գրականութեան նախահայրի մահվան առիթով։

Նախագահ՝ Մինաս աւագ-քահանայ

—

Ախալցխա, 1 դեկտ.: Ախալցխայի հայոց դպրոցի ուսուցչական խումբը և հոգաբարձութիւնը իր խորին ցաւն է յայտնում Պերճ Պռօշեանի մահվան առիթով։ Ներկայացուցիչ ընտրվեց Մուշյեան։

Դպրոցի տեսուչ՝ Իւսուփեան

—

Վլադիկավկազ, 1 դեկտեմբերի։ Հայոց դպրոցի մանկավարժական խորհուրդը խոր վիշտ է յայտնում մեր վիպասան Պռօշեանի մահվան առիթով։

—

Թէոդոսիա, 1 դեկտեմբերի։ Ցաւում ենք «Հացի խնդիր»-ի հեղինակի մահը։

Հայոց դպրոցի ուսուցիչներ

—

Պեատիգօրսկ, 30 նոյեմբերի։ Յանձին հանգուցեալ Պռօշեանի հանգաւ մեր գրականութեան փոքրիկ ջահի մի կրակն ևս։

Պեատիգօրսկի հայ հասարակութիւնը հանգուցեալի մէջ գնահատելով նոյնպէս հրապարակախօսական և մանկավարժական ծառայութիւնները՝ խորին վիշտ և կսկիծ է յայտնում ազգային անփոխարինելի կորստի առիթով։

Եկեղեցական հոգաբարձութիւն

—

Ախալքալաք, 30 նոյեմբերի։ Պատուարժան գրողի տեղիս յարգողները միանում են ընդհանուր վշտին։

Աւագ-քահանայ Քաջազնունի

—

Կարս, 30 նոյեմբերի։ Մեր խորին յարգանքն ենք մատուցանում շնորհալի գրողի և աշխատաւորի գերեզմանի առաջ։

Կարսի դպրոցի ուսուցչական խումբ

—

Պերճ Պռօշեանի թաղման կարգադրիչ մասնաժողովը երէկ իր նիստում որոշեց հետևեալը.

1) Յուղարկաւորութիւնը կատարել հետևեալ ճանապարհով. Ներսիսեան դպրոցի մօտով, պօստի փողոցով և ապա Արմեանսկի բազարով բարձրացնել Մետեխի վերելքով Հավլաբար, այնտեղից գերեզմանատուն։

2) Ճառախօսների ցուցակը և առհասարակ գիւմուններին պատասխան տալը յանձնել բժ. Մուրադեանին։

—

Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը իր նիստում Պերճ Պռօշեանի թաղման առիթով որոշել է.

1) Ամբողջ հոգաբարձական և ուսուցչական կազմով ներկայ լինել թաղմանը.

2) IV, V և VI դասարանի աշակերտներին տանել յուղարկաւորութեան հանդէսին։

3) Թաղման օրը երգեցիկ խումբը երգելու է Վանքի եկեղեցում.

4) Պռօշեանի յիշատակը յաւերժացնելու համար ունենալ առանձին խորհրդակցութիւն.

5) Կախել լուսանկարը ուսուցչական սենեակում.

6) Յանձնվեց պ. վերատեսչին դամբանական խօսելու։

—

Շամախի, 1 դեկտ.: Թանգագին հայրենակից, երկրորդ արդիւնաւէտ բանաստեղծ Պռօշեանի մահվան առիթով յայտնում եմ սրտանց ցաւակցութիւնը։

Անանիա արքեպիսկոպոս

—

Իգդիր, 1 դեկտեմբերի։ Խորին վիշտ ենք յայտնում չքնական կեանքի նկարիչ Պռօշեանի մահվան առիթով։

Հոգաբարձութիւն, ուսուցչական խումբ

—

Վիեննա։ Անվերջ ողբում ենք նշանաւոր մարդու՝ Պռօշեանի մահը։

Վիեննայի Մխիթարեանների Թագակիր աբբա՝ Թոռնեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱ ԳՆՈՒՄ ԷՐ ՄԵՌՆԵԼՈՒ

I

Առաւօտեան ժամը եօթն էր, գեռ նոր էի հագնվել, դուրս թակում են։ Ես պատուհանից նայեցի. ծերունի վիպագրող Պերճն էր դռանս կանգնողը։ Իսկոյն ներս մտաւ. կառքում ունեցածներըս վայր առնելով բերին սենեակ. ինքն ևս յոգնած թախտի վրա պառկեց։

Ի՞նչքան ընկել էր Պերճը, ո՛ր աստիճան նիհարել, թուլացել էր նա. այլ ևս նրանում չէր նկատվում այն կենդանութիւնը, որ մի երկու երեք տարի առաջ ունէր։ Ջայնը ներս ընկած, հոգսը, վիշտը ակօսել էին նրա դէմքը, և արդէն լուսապակաս աչքերում նկատվում էր արտասուք, երբ նա բերան էր բաց անում։

Կնոջ մահը, որդու տարագրութիւնը, իր հաստատ բնակարան չունենալը քշում, հրում էին նրան դէպի գերեզման, և նա, կարծես զգալով իր մահվան մօտիկութիւնը, թեւերը բաց՝ ձեռք էր պարզում դէպի մահվան հրեշտակը։ Վիշտը այլ ևս տանելի չէր. նա, որ դիմադրել էր իր ժամանակին հալածանքի, քաղցածութեան, ճնշող աղքատութեան և դրանց ճանկերից ազատվել էր ճակատը բաց, այժմ այլ ևս չէր դիմանում դրան և մահ էր կանչում։

Ներսիսեան դպրոցը աւարտելուց յետոյ, Աշտարակում՝ իր սիրած հայրենիքում ուսուցչութիւն անելուց յետոյ, վերադառնում է Թիֆլիս դատարկ գրպանով և տեղաւորվում է Վանքի աւագ եկեղեցու գաւթի աշտարակում և հենց այդ դառն աղքատ ժամանակ Աբովեանցի «Վէրք Հայաստանին» կարդալով ոգևորված իր «Սօս և Վարդիթերն» է սկսում։ Առաջին գլուխները կարդալով իր հայրենակից Յովսէփեանի մօտ և խրախուսվելով նրանից, գեղեցիկ սկսած գործը առաջ է տանում։ Շատ անգամ, ինչպէս ինքն էր ասում, քաղցած փորով, չոր գետնին գիշերներ է անցրել այդ աշտարակի մէջ՝ կարօտ կօպէկի, բայց նրանում յուսահատութեան նշաններ չեն երևացել, և նա հզօր տոկունութեամբ նուիրվել է ազգային գրականութեան և դրա մէջ է գտել իր հոգեկան մխիթարութիւնը։

II

Այն ժամանակվայ տոկուն բնաւորութիւն ունեցող, չարքաշութեան վարժ Պերճը այժմ վշտի և դառն հոգսի ծանրութեան տակ ճնշված՝ մահ էր կանչում և դէպի մահը առաջ վազում։ Նա մտահոգ էր դարձել, րոպէաւ, կարծես ինքն իրան մահվան թեւերի տակ պատսպարված զգալով, փակում էր աչքերը, ու դէմքը մռայլվում։ Ուշքի էր գալիս ու դառնութեամբ ասում.

—Ա՜խ, գեռ ես կենդանի՞ եմ։ Զէ, ես պիտի մեռնեմ, և կը գնամ Աշտարակ, նրա քչքչան առուի ջրից մէկ բուռ կը խմեմ, նրա աղ դրած կողակը կուտեմ և հանգիստ կը մեռնեմ, եթէ աշտարակցիք վերջին խնդիրս լսեն։

Եւ նա երկու օրից յետոյ գնաց Աշտարակ, այնտեղ մեռնելու և իր հայրենի գերեզմանատանը իր հայրենակիցների շարքում թաղվելու։

Մենք միասին էինք. ճանապարհին կարծես նա ոգի առած կենդանացել էր։ Նա խօսում էր զուարթ, ուրախ և փաղօնում եղածներին խրատներ կարդում։ Մի քանի հայեր, երբ իմացան խօսողը Պերճ Պռօշեանն է, շրջապատեցին, և ամեն մինը ծերունի հռչակաւոր վիպագրողին կամենում էր իր ծառայութիւնը մատուցանել։ Իրան շրջապատված տեսնելով յարգողներից, կարծես Պերճը ջահելացաւ ու աշխոյժով ասում էր.

—Օ՜հ, տղերք, ես գնում եմ հայրենի Աշտարակ գիւղը, գնում եմ այնտեղ մեռնելու, բայցի Աստուած լիս ու ճար կանի, և ես կը մեռնեմ այնտեղ. ó ինչքան հանգիստ կը լինի իմ հոգիս, երբ ես պապերիս և ծնողներիս շարքում կը լինեմ։ Ինչ ուզում էք եղէք, բայց մի՛ մոռանաք ձեր ազգը, ձեր հայրենիքը և ձեր կոչումը։ Ուրիշ հովերով մի տարվէք, դրանից հայը փրկութիւն չէ կարող ունենալ։

III

Մենք բաժանվեցինք Շահալի կայարանում, համբուրվեցինք, և նա գնաց մեռնելու։

Հոկտեմբերի 10-ն էր։ Տասն երկու օր էր անցել նրա հայրենիք գնալու վրայից, հոկտեմբերի 21—22-ի առաւօտեան ժամը 7-ին նորից դուռս թակում են։ Պատուհանից նայեցի, դարձեալ Պերճն էր. և նա ներս մտաւ. համբուրվեց ու լացակումած և խեղդված ձայնով ասաց.

—Մուրազս փորումս մնաց և ես չը մեռայ, նորից վերադարձայ վշտի ճանկերում տորր-ված. գուցէ կը մեռնեմ այստեղ. թաղեցէք կնոջս մօտ. նրա գերեզմանը միայն Բաղաբատ Արծրունին գիտէ։

Ու թուլացած ընկաւ թախտի վրա։ Ոչ մի մխիթարական խօսք չէր ազդում նրան։ Փոքր անցնելուց յետոյ նա նստեց, աչքերը տորեց. արտասուելուց յետոյ քիչ հանգստացել էր. ու պատմեց իր գնալն ու վերադառնալը։ Նա դժգոհ էր ամեն տեղից, ուր հանգիպել էր։

—Միայն հանգիստ եմ,—ասաց,—որ Աշտարակի ջուրը բուռը բուռը խմեցի ու յիշեցի երիտասարդութիւնս, կերայ կողակ, խաշ, քուֆթա. այժմ մնում է ինձ մի անկիւն գտնել ու խաղաղ մեռնել։

Նա ուզում էր հիւանդանոց մտնել կամ առանձին սենեակ բռնել. ես արգելք դարձայ դրան և ստիպեցի որդոց մօտ գնալ. երկու-երեք ժամ ես խօսում էի այդ մասին, իսկ նա գլուխը քաշ՝ լուռ լսում էր. ես հասկանում էի. որդոց սէրը մաշում էր նրան. և նա յանկարծ ոտքի կանգնեց և ասաց վճռաբար. «Ես գնում եմ Բագու»։ Եւ հենց այդ օրը երեկոյեան գնացքով ճանապարհ գրի դէպի Բագու։ Գնաց և մահվան դագաղի մէջ վերադարձաւ իր սիրած ու պաշտած կնոջ կողքին իր հանգիստը գտնելու՝ տարագրված որդոց և օտարութեան մէջ գտնվածների երեսը չը տեսած։

Հանգիստ ոսկորներիդ, անզուգական հայրենակից. թող օրհնված լինի քո յիշատակը, Աշտարակի թագ ու պսակ իմ Պերճ Պռօշեանց։

Ս. Է.

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Թիֆլիսի արհեստաւորաց դպրոցի տեսուչ Պօբէդիմօվի սպանութեան մէջ մեղադրվող Պօպօվի և Բէլինօվի մահվան պատիժը Պետերբուրգի գլխաւոր զինուորական դատարանը փոխարինել է տաժանակիր աշխատանքներով։

Վճռաքինջ բողոքագիրը պաշտպանել է երդուեալ-հաւատարմատար Օ. Գրուզենբերգ։

ՌՕԴԻՉԵՎԻ ՄԻՋԱԴԷՊԻ ԱՌԻԹՈՎ

—

Դումայի որոշումը Ռօդիչևի վերաբերմամբ համակրութիւն չէ գտնվում հասարակական գիտակից շրջաններում։ Մամուլը աշխատում է արձագանք տալ այդ առիթով եղած արտայայտութիւններին, լուսաբանել դէպքը և գնահատութեան ենթարկել նրան։ Մի կողմ թողնելով առաջադիմական ուղղութեան պատկանող լրագիրներին, մենք կարևոր ենք համարում տալ հակառակ ուղղութեան պատկանող ամենաազդեցիկ թերթի, այն է «Новое Время»-ի, աշխատակից Պիլենկօյի կարծիքը, որին, ինչպէս, աջողվել է մի քանի անաչառ խօսքեր ասել այդ առիթով։

Ապա ամբիօն բարձրացաւ Ռօդիչևը,— ասում է նա։—Կարելի է համաձայնվել կամ չը համաձայնվել նրա ճառի բովանդակութեան հետ։ Բայց անհրաժեշտ է խոստովանել, որ նա արտասանեց մեծ ոգևորութեամբ, այն բուռն եռանդի արտասովոր թափով, որով օժտված են բնածին հռետորները։ Կարելի է վիճել կատարելագործված ճառախօսի ազգային հարցի ու հայրենասիրութեան մասին ունեցած ըմբռնողութեան դէմ. բայց չէ կարելի չը խոստովանել, որ ոչ ինքը Ռօդիչևը, ոչ էլ որևէ մի ուրիշ պատգամաւոր բոլոր երեք Դումաների մէջ երբեք չեն գրաւել պարլամենտը այդօրինակ ոյժով։ Ռօդիչևին ընդհատում էին, բայց նրան լսում էին կսկծալի ուշադրութեամբ։ Արդէն համարեա վերջացնելով Ռօդիչևը ասաց «Ստոլիպինեան վզնոցի» մասին, վերարտադրելով անցած տարի Պուրիշկեվիչի կողմից Դումայի ամբիոնից ասած «Մուրավիևեան օձիքը»։ Ինչպիսի համարձակ մտքեր ուզէք կարելի է արտասանել, բայց ոչ գիժել բիրտ խօսքերի։ Սակայն որքան էլ որ մեծ լինէր Ռօդիչևի յանցանքը խօսքերի խստութեան կողմից, ես այնուամենայնիւ կարծում եմ, որ նրա վերաբերմամբ գործադրված պատիժը չափից դուրս խիստ է։

Գոյութիւն ունեցող պարլամենտական կարգերի, Ֆրանսիայի, Բելգիայի, Անգլիայի և այլ սահմանադրական երկիրների պարլամենտական պրակտիկայի սկզբունքների տեսակէտից, Դումայի ընդհանուր իրաւունքի այդ գործադրութիւնը պէտք է համարել մի արտասովոր բացառութիւն իբրև արգիւնք կուսակցական վրիժառութեան։ «Речь» լրագրի մէջ Մ. Իպպօլիտօվը, խօսելով պարլամենտական տրադիցիաների մասին, գալիս է այն եզրակացութեան, որ Ռօդիչևին 15 նիստից հեռացնելու որոշումը կայացնելիս առաջնակարգ դեր են խաղացել ոչ թէ կարգապահութեան շարժառիթները ու պարլամենտական լաւ բարքերը, այլ պարլամենտից և ամբողջ պարլամենտական շրջանակից դուրս գտնվող տրամադրութիւնները։ Ապա թէ ոչ՝ ինչպէս կարելի էր այդքան խիստ վարվել, երբ ճառախօսը յետ վերցրեց իր խօսքերը։

Այսպէս են վարվում մեզանում ժողովրդական ամենայարգելի և տաղանդաւոր ներկայացուցիչներից մէկի հետ։

*

Իսկ ինչպէս են վարվում ուրիշ պարլամենտներում։ Ահա նոյնանման օրինակներից մէկը։

Ֆրանսիական պատգամաւորների պալատում ներկայումս քննվում է եկեղեցական կալուածների հարցը, մի հարց, որ սաստիկ յուզում է Ֆրանսիայի կղերական և չափաւոր շրջանները։ Հասկանալի է, որ պարլամենտական վիճաբանութիւնների մէջ էլ մտնում է այն կրքոտութիւնը, որ ցոյց են տալիս առօրեական կեանքի մէջ կաթոլիկ եկեղեցու կուսակիցները. նրանք չեն կարողանում հաշտվել այն քաղաքականութեան հետ, որ աշխատում է զրկել եկեղեցին դարերով դիզած իր հարստութիւններից։

Նոյեմբերի 27-ին (ն. տ.) այդ հողի վրա պատգամաւորների պալատում տեղի է ունեցել մի խոշոր միջադէպ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պերճ Պռօշեանի մասին)

—

Այսօր յաւիտենականութեան ենք յանձնում Պերճ Պռօշեանին, անցեալ դարի վաթսունական թւականի հայ գործիչների մոհիկաններից վերջինին։

Շահնազարեան, Մելքիսեդէկ Մուրադեան, Մարկոս Աղաբէգեան միւս մոհիկանները վաղուց արդէն հանգստանում են յաւիտենականութեան մէջ, ուր այժմ գնում է նրանց միանալու և Պռօշեանը։

Պերճ Պռօշեանին՝ իբրև «Սօս և Վարդիթերի» հեղինակի ես վաղուց ճանաչում էի, առանց անձնապէս ծանօթ լինելու։ Անձնական ծանօթութիւնս տեղի ունեցաւ 1884 թ., երբ ես Պարսկաստանից եկայ Երևան՝ Էջմիածին գնալու, կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու համար։ Հազիւ իջել էի Երևանի մի հիւրանոցում, երբ ինձ յայտնեցին, որ թեմական տեսուչ Պերճ Պռօշեանը կամենում է ինձ տեսնել։ Ես իսկոյն ընդունեցի նրան։ Մենք ողջագուրվեցինք, իբրև հին բարեկամներ, թէև առաջին անգամն էինք տեսնում իրար։

—Հը, գեռ մի սաս տեսնեմ,—դիմեց ինձ Պռօշեանը,—ում ես ձայն տալու, ո՞վ է քո թեկնածուն կաթողիկոսութեան համար։

— Ի՞նչ էք կարծում, պ. Պռօշեան, ո՞ւմ ձայն կը տամ ես։

— Ես գիտեմ, գիտեմ, Թունդ մշակական ես, ուստի և Ներսէս Վարժապետեանին պէտք է ձայն տաս. բայց ես շարունակ կարդում եմ քո յօդուածներդ, ծանօթ եմ քո գործունէութեան, որովհետև հետևում եմ մեր երիտասարդ գործողների գործունէութեան, ուստի և կարծում եմ, որ թունդ ազգասէր ես, հետևաբար ներկայ դէպքում պահպանողական կը լինես։

— Ուրեմն...

— Ուրեմն, ձայն կը տաս Մելքիսեդէկ Մուրադեանին։ Պէտք է նրան ձայն տաս, մանաւանդ որ դու նրա և իմ աշակերտն ես եղել։

— Ո՞րտեղ։

— Շուշու դպրոցում. 1863—64 թ. մենք ունէինք պատրաստական դասարանում Առաքելեան անունով մի փոքր աշակերտ։

— Այդ ես չեմ եղել, այլ հանգուցեալ մեծ եղբայրս, Վասիլ Առաքելեանը. ես այդ ժամանակ շատ փոքր էի, հազիւ 7—8 տարեկան. բայց դա նշանակութիւն չունի. ես շատ լաւ ծանօթ եմ Մուրադեանի գործունէութեան և նոյնիսկ նրան արժանաւոր եմ համարում կաթողիկոսութեան, բայց նա կը լինի երկրորդ կանդիդատ, իսկ առաջինը պէտք է լինի Ներսէս Վարժապետեանը, և հենց դուք էլ, իբրև իսկական ազգասէր, պէտք է Վարժապետեանին ձայն տաք. միթէ դուք նրան արժանաւոր չէք համարում կաթողիկոսութեան։

— Ոչ, ես նրան համարում եմ արժանաւոր,—պատասխանեց Պռօշեանը,—բայց մեր ներկայ հանգամանքներում Մուրադեանին աւելի ձեռնհաս եմ դատում կաթողիկոսութեան համար, իբրև մի անձի, որ լաւ ծանօթ է ռուսական օրէնքներին, եկեղեցու պատմութեան։ Ես առհասարակ դէմ եմ, որ ընտրվեն Թիւրքիայի հոգևորականներից։ Մուրադեանը թէև Թիւրքիայում է գտնվում այժմ, բայց նա ռուսահայ գործիչ է, նրա երիտասարդական գործունէութիւնը անցել է մեր մէջ, լաւ ծանօթ է մեր գործերին, մանաւանդ նա մեծ զարկ կը տայ դպրոցական գործին։ Յամենայն դէպս, դուք Մուրադեանին ձայն կը տաք։

— Այդ՝ իբրև երկրորդ կանդիդատի։

Մենք բաժանվեցինք. ես գնացի Էջմիածին. կատարվեց կաթողիկոսական ընտրութիւնը, և կաթողիկոս ընտրվեց Ներսէս Վարժապետեանը, իսկ երկրորդ կանդիդատ՝ Մուրադեանը։

Ներսէսի ընտրութիւնը բեկանվեց։ Նոր ընտրութիւն նշանակվեց 1885-ին. ես նորից եկայ Էջմիածին՝ մասնակցելու ընտրութեան, և այդ անգամ ես արդէն կարողացայ կատարել Պռօշեանի ցանկութիւնը՝ ձայն տալ, իբրև առաջին կանդիդատի, Մելքիսեդէկ Մուրադեանին։ Սակայն ռուսական կառավարութիւնը չը հաստատեց սրան, այլ հաստատեց Մակարին։ Պռօշեանի կսկիծը մեծ էր։ Բայց նա չը յուսահատվեց։ Մակարի մահից յետոյ, երբ «Մշակը» և ազգի մեծամասնութիւնը Խրիմեանի կանդիդատութիւնը դրեց, Պերճ Պռօշեան դարձեալ աշխատում էր Մուրադեանի թեկնածութեան համար։

Ընտրվեց Խրիմեանը։

Ահա այդ ժամանակ իմ և նրա մէջ մի մեծ ընդհարումն պատահեց։

Պռօշեանը հրատարակեց իր «Ցեցեր» վերնագրով վէպը։ Ես գտայ, որ այդ վէպի մէջ Խրիմեան Հայրիկի անձնաւորութիւնը դուրս էր բերված շատ մռայլ գոյներով, ուստի և տպեցի «Մշակի» մէջ (1892 թ. ամառը) մի սաստիկ քննադատական յօդուած Պռօշեանի այդ գրքի դէմ, որ մի զօրեղ շարժումն առաջ բերեց մշակականների մէջ հեղինակի դէմ։

Պռօշեան մտաւ «Մշակի» խմբագրութիւնը. այդ ժամանակ Գ. Արծրունին գնացել էր Կօջոր և խմբագրի պաշտօնը կատարում էր Յ. Տէր-Մարկոսեանը։ Բուռն բացատրութիւնից յետոյ, երբ Պռօշեան յայտնեց, որ ինքը սաստիկ վատ դրութեան մէջ է դրված այդ յօդուածի առիթով, որ իրան լաւ չեմ հասկացել ես, որոշվեց, որ նա գրէ մի բացատրութիւն այդ մասին։ Այդ բացատրութիւնը տպվեց «Մշակի» մէջ, բայց մեր յարաբերութիւնները երկար ժամանակ մնացին լարված։

Անցան մի քանի տարիներ. ես այլ ևս, ի հարկէ, նոյն կարծիքը չունէի Խրիմեանի մասին, և քննադատօրէն էի վերաբերվում նրա կաթողիկոսութեան։ Պռօշեան չը գիտեմ որտեղից էր իմացել, որ ես և Լէօն 1892 թ. գրել ենք Խրիմեանի մանրամասն կենսագրութիւնը և գործունէութիւնը, բայց յետոյ չենք հրատարակել՝ փոխած լինելով մեր կարծիքը այդ գործունէութեան շատ կէտերի վերաբերմամբ։

Եւ ահա մի օր, երբ ես Գօլօվինսկի պրօսպէկտով անցնում էի, դէմս ելաւ Պռօշեանը, որ երկու ձեռքը մեկնելով ինձ ասաց.

— Այժմ հաշտվինք. այժմ դու պէտք է խոստովանես, որ այն ժամանակ դու անարդար տեղը յարձակվեցիր իմ վրա։

Ես սեղմեցի նրա ձեռքը։

Մենք նորից բարեկամներ դարձանք։

Այս տարի ամառը ես նրան պատահեցի Կիսլօվօդսկում։ Սաստիկ ծերացած, ընկճըված, լքված և յուսահատ տեսայ, մի ոտը գերեզմանում, ինչպէս ասում են։

Հարցրի պատճառը։

— Մի՞թէ չը գիտես. մի՞թէ չը գիտես ինձ հասած սոսկալի դժբաղդութիւնները իրար ետևից։ Կինս մեռաւ, որդիս ևս կորաւ։

— Բայց որդիդ ոչ մի վատ բան չը կատարեց. ինչ անենք որ նա սօցիալիստ է. յամենայն դէպս նա մարտնչող էր գաղափարների համար։

— Ա՜խ, դու ևս այդպէս ես խօսում։ Ես աւելի կը ցանկանայի, որ իմ Պերճ Պռօշի որդին լինէր ազգային գործիչ և ոչ սօցիալիստ։ Ես այդ չէի երազում որդուս համար։

Ես ինչքան կարող էի՝ մխիթարեցի, թէև գիտէի, որ նա անմխիթար է։

— Այստեղից ո՞ւր պէտք է գնաս, Պերճ, հարցրի ես։

— Պէտք է գնամ Աշտարակ՝ մեռնելու։ Այժմ մի բան եմ ցանկանում. հանգստանալ գերեզմանի մէջ։

Օգոստոս ամսից յետոյ այլ ևս չը տեսայ նրան։

Հ. Առաքելեան

Պատգամաւոր Դելաեյը կշտամբել է դաւանութեան մինիստր Բրիանին, որ նա զուրկ է բնաւորութիւնից և անհետեւողական, մի քանի ակնարկներ անելով նրա անցեալ գործունէութեան մասին: Բրիանը, իբրև պատասխան, այդ ակնարկները անուանել է ստոր: Դելաեյը պատասխանել է մինիստրին. «Ես ուղարկում եմ ձեզ այն ապտակը, որին դուք արժանի էք»: Բրիանը այդ վիրաւորանքի դէմ ուսերը թոթվելով և արժանապատուութեամբ նկատել է. «Մենք խօսում ենք տարբեր լեզուներով»:

Պալատի արմատական մեծամասնութիւնը բաւականին խաղաղ համակրական ցոյց է սարքել մինիստրին, պալատի նախագահը վիրաւորողին կարգի է հրաւիրել, և դրանով էլ վերջացել է ամբողջ միջադէպը:

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի ՆԻՍՏԸ

—

Դումայի նոյեմբերի 17-ի նիստի մասին իր ժամանակին մենք տուել էինք հարկաւոր տեղեկութիւնները, բայց կրկնել նրան այն մանրամասնութեամբ, որ տալիս է «Товарищъ» լրագիրը, կարեւոր ենք համարում:

Տալիս ենք համառօտելով:

«Այն, ինչ որ տեղի ունեցաւ երէկվայ նիստում,—ասում է թերթը,—դժուար է հաղորդել խօսքերով... Այդպիսի տեսարաններ չեն եղել ոչ առաջին Դումայում, ոչ էլ երկրորդում... Հարկաւոր էր ներկայ լինել Դումայում և անձամբ վայելել այդ ամբողջ դէպքը, որպէսզի կարելի լինէր զգալ նրա արտակարգ նշանակութիւնը: Այն տեսարանը, երբ ամբողջ աջակողմը առաջ նետվեց դէպի ամբիոնը, որի վրա կանգնած էր գունատ և յուզված պատգամաւոր Ռոդիչեւը իր զօրեղ ճառի մէջ արտասանած խիստ խօսքերից յետոյ,—ուղղակի սարսափելի էր և ցնցող: Պակաս ցնցող չէր նիստի վերջում տեղի ունեցած տեսարանը, Ռոդիչեւի ներողութիւն խնդրելը, նրան հեռացնելը Դումայի 15 նիստերից, որոտալից ծափահարութիւնները պրեմիէրի հասցէին և այլն: Չը նայելով դրան, այնուամենայնիւ երէկվայ նիստը ամբողջապէս խոր տպաւորութիւն կը թողնէ այն բոլորի վրա, որոնք ականատես են եղել նրան: Կասկած չը կայ, որ նա կունենայ խոշոր հետեւանքներ զուտ քաղաքական բնաւորութեամբ՝ ինչպէս կուսակցութիւնների համախմբման տեսակէտից Դումայում, այնպէս և կառավարութեան քաղաքականութեան նկատմամբ, և, վերջապէս, երկրի մէջ:

Քննվում էր կառավարչական դեկլարացիան:

Առաջին խօսողը Պ. Ն. Միլիւկովն էր: Դա չափազանց իմաստալից, մեծ ուժով ու վարպետութեամբ, հանգիստ տոնով արտասանված, ներքին բովանդակութեամբ հարուստ և նուրբ մի ճառ է: Ես չեմ հաղորդի այդ ճառի մանրամասն բովանդակութիւնը. նրան պէտք է կարդայ իւրաքանչիւրը, ով հետաքրքրվում է մեր պետական-հասարակական կեանքի քաղաքական հարցերով:

Միլիւկովի ճառը, որ ամբողջովին հիմնաւորված էր խիստ տրամաբանական օրէնքների վրա, ահագին աջողութիւն ունեցաւ և ուղղակի նպատակին էր դիպչում. Թէև ծափահարում էր նրան օպպօզիցիան միայն, բայց ծափահարում էր նա ամբողջովին, սօց.-դեմօկրատներն անգամ: Այդ ճառին պատասխանելը հեշտ չէր լինի մինիստրների խորհրդի նախագահի համար: Օպպօզիցիան Միլիւկովի ճառով այս անգամ չափազանց զօրեղ դիրք գրաւեց, և կառավարչական դեկլարացիան խախտված էր արդէն: Օպպօզիցիայի վարկը չափազանց բարձրացրեց նա:

Նրան յաջորդում է Պուրիշկեվիչը:

Բայց ահա ամբիոն է բարձրանում Ֆ. Ի. Ռոդիչեւը, երէկվայ անցքի յանցաւորը: Նրա հէնց առաջին խօսքերից Դումայի նիստի մթնոլորտը կարծես սկսում է էլեկտրականանալ. Նրա ճառը իր ուժով ուղղակի հզօրագին է: Նրա ամեն մի խօսքը, տաքացած կէտի նման, թափվում էր Դումայի դահլիճի մէջ: Նա այրում-դաղում էր իր խօսքերով, փոփխորում, շօշափում էր վերջին երկու տարիների քաղաքականութեան ամենասարսափելի արտայայտութիւնները:

Մանաւանդ զօրեղ էր նրա ճառի այն մասը, ուր լուսաբանվում էր, թէ ինչ բան է հայրենիքի սէրը, ինչումն է կայանում ազգային պարծանքը և ազգային զգացմունքը:

«Մենք կարգապահութեան պաշտպաններ ենք»... Աջակողմեանները բուռն կերպով գլորանում են, աղմկում... Ռոդիչեւը շարունակում է. «Ես ուզում եմ ասել աւելին. այն ժամանակ, երբ ռուսաց իշխանութիւնը յեղափոխութեան բռնկումների դէմ մաքառելու համար գտնում էր միայն մի միջոց»... Եւ ապա հետեւում է նրա ահեղ, բրտայայտիչ ժեստը, մահվան պատիժը պատկերացնող... որից յետոյ դուրս է թռչում «Ստոլիպինեան վզնոցը» ֆրազան... Ծայրայեղ աջակողմը վեր է թռչում տեղից, գոռում, աղմուկ, բռունցքի սպառնալիքներ, տասնեակ ձեռքեր մեկնվում են դէպի Ռոդիչեւը... Իսկ նա կանգնած է ամբիոնի վրա լուռ: Իրարանցում է սկսվում. ձախակողմեան և կենտրոնի պատգամաւորները նետվում են դէպի ամբիոն...

Եւ թւում է, որ ահա հէնց այս րոպէիս կը սկսվի դուրս ու դմփոցը: Ռոդիչեւը իջնում է դէպի ձախակողմեանները...

Ապա քուէարկում են նախագահի առաջարկը՝ Ռոդիչեւին 15 նիստից հեռացնելու համար: Հակառակ է միայն օպպօզիցիան՝ սահմանադիր-ռամկավարներն ու ծայրայեղ ձախակողմեանները: Ամբողջ կենտրոնը, ըստ երեւոյթին, բոլոր խաղաղ վերանորոգչականներն, ու, ի հարկէ, ամբողջ աջակողմը միանում են առաջարկին:

Այդ է երէկվայ նիստի պատկերը:

Նա նախ և առաջ ցոյց տուեց օպպօզիցիայի չափազանց մեծ ույժը յանձին կադետների ֆրակցիայի ականաւոր ներկայացուցիչների, իրանց հռետորական տաղանդով: Կադետները, ի դէմս Միլիւկովի, Ռոդիչեւի և Մակլակովի, հանդէս գալով նոյեմբերի 16-ի և 17-ի նիստերում, կարող էին զարմանալի զօրեղ դիրք բռնել թէ աջակողմեանների, թէ կենտրոնի և թէ կառավարութեան նկատմամբ: Բայց... Ռոդիչեւի խիստ խօսքերը, որ, երեւի, նրա տաք բնաւորութեան հետեւանքն էին, այդ դիրքը բաւականին թուլացրին:

Ինչ վերաբերում է Ռոդիչեւի ճառին, նրա թողած տպաւորութիւնը ահագին էր»:

ՀԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

—

Նոր-Բայազէտ, 19 նոյեմբերի

Ի նկատի ունենալով հացի գների թանգութիւնը, օրէ-ցօր աւելանալը և ժողովրդի փողի սղութիւնը, քաղաքային վարչութեան անդամների մէջ միտք է յղացել մի լաւ միջոց գտնել հացի թանգութեան դէմ առնելու համար: Ամենագլխաւոր միջոցն են համարում քաղաքի ձեռներէցութեամբ ալիւրի մի սեփական խանութ հիմնելը, որ էժան գնով հաց հայթայթէր կարիքաւոր ժողովրդին: Էժան գնով ասելով՝ մենք չենք ասում, թէ կիսագնով ալիւր վաճառէր ժողովրդին, ոչ, այլ այդ միջոցով դէմ գնէր հացի թանգութեան, որ սպառնում է 2 ր., բարձրանալ 3 ր. պուդը: Քաղաքը, սակայն, մտադիր է մի խոշոր գումար (օր. 10,000 ր. փող ձեռք բերել և, յարաբերութեան մէջ մտնելով Ռուսաստանի ֆիրմաների հետ, մեծ քանակութեամբ ալիւր ներմուծել մեր քաղաքը և առնված գնով բաց թողնել ըսպառող ժողովրդին: Այդ հանգամանքը անշուշտ կը կանգնեցնէր հացի գները մի որոշ աստիճանի վրա, ապա թէ ոչ թողնել այդ առեւտուրը մի քանի անհատների ձեռքը և ամբողջ հացի մատակարարութեան գործը յանձնել մի քանի ալիւրավաճառի ու բաղկալների քմահաճոյքին, դա աւելի քան մեծ յանցանք է, քանի որ նրանք կամ գները օրէ-ցօր կը բարձրացնեն, կամ յաճախ զանազան թելադրութիւններ կանեն հաց հայթայթելու խնդրում, կամ թէ մի փառաւոր օր ժողովրդին կը մատնեն սովածութեան: Բայց երբ մեր քաղաքը իր սեփական հացի շտեմարանն կունենայ և կարիք եղած դէպքում առնված գնով բաց կը թողնէ աղքատ ժողովրդին, այն ժամանակ այդ հանգամանքը կազդէ նաև շուկայի գների վրա, որտեղ հացի արժէքը իր հաւասարակշռութիւնը կը պահպանէ մի որոշ ժամանակ, օրինակ մինչև նոր հունձի երեւալը:

Սակայն դժուարը քաղաքի համար փող ճարելն է, որովհետև քաղաքն այնքան դրամագլուխ չունի այդ ձեռնարկութեան համար: Իրաւ, նախկին տարիներում մեր քաղաքը մի փոքրիկ պահեստի գումար ունէր արքունի դրամարկղում, բայց այդ գումարը տարիների ընթացքում քաղաքը ծախսելով իր անհրաժեշտ կարիքների վրա, այժմ արդէն սպառվելու վրա է, և դա հազիւ թէ բաւականացնէ այնպիսի մի խոշոր ձեռնարկութեան, որպիսին է հացի մատակարարութեան գործը: Մնում է պարտք վերցնել քաղաքի անունից ուրիշ առեւտրական բանկերից էժան տոկոսով և այդ փողը մի քանի ամսից յետոյ վերադարձնել: Դա իհարկէ կարող է սովալլուկ ազգաբնակութեանը մեծ բարիք անել: Եթէ ոչ՝ այս րոպէիս մեր շուկայում օրերով ալիւր չէ ճարվում, որ կարող է էլ աւելի զգալի դարձնել հացի կարիքը աղքատ ժողովրդի համար: Բայց թէ ինչ կերպ կը ձեռնարկի հացի մատակարարութեան գործին մեր քաղաքը, այդ մասին կը հաղորդեմ իր ժամանակին.

Գ. Սիմոնեան

ՂԱՓԱՆԻ ՑԱՒԵՐԻՑ

—

Շիկահող, 9 նոյեմբերի

Ծանր, յուսահատական օրեր են հասել ամբողջ Ղափանի համար. մէկը միւսին յաջորդող պատահարների, պէտական աղէտների ահագին շարքեր արնաքամ են արել մի ժողովուրդ, որ այսօր, տակաւին աշնան կիսին, կանգնած է սովի դրան:

Հագարակի շրջանը՝ իր հոչակաւոր Եղւարդ, Ուժանիս, Մողէս, Հագարակ, Խդրանց, Տանձթափա գիւղերով, որ իրաւամբ Ղափանի «Շիրակայ ամբարք» կարելի է կոչել, որ իւրաքանչիւր տարի հարիւրաւոր բեռներ արտահանում էր ու միշտ հէն ցորենը չէր պակասում հօրերից,—այս տարի ուտելու հաց չունի: Երկարատեւ երաշտը այրեց-ոչնչացրեց ընդարձակ դաշտերը:

Չքաւորութեան աղբիւր Շիկահողի շրջանը, ուր անուանի էին լոկ երկու գիւղ՝ Սրաշէն ու Հանդ, այս տարի իր բոլոր եօթ գիւղերով «օջաղը սրբել, կողքին նստել է»: Շիկահող, Սրաշէն, Հանդ, Ծաւ, Կեմանց կարկուտն ու անժամանակ երկարատեւ անձրևները շատ քիչ բաժին թողին գեղջուկին իր քրտինքի վաստակից, իսկ Շկեռ ու Մազրա, այժմ էլ՝ նոյեմբեր ամսին, կանգուն արտեր կան ձիւնի տակին և խուրձի դէզեր կալերում: Աւելի անմխիթար պատկեր ունի հանքերի շրջանը Կաւարտ, Բարաբաթում, Բեխ, Բաղաւուրճ, Գիւտգիւմ և մասամբ էլ Ճակատէն գիւղերով, ուր ռաշպարը վաղուց է արօրը փոխել մուրճի հետ, հօտաղը՝ ճիպտը մաղարի ուրագի, գիւղացին պարարտ, բերրի հողը՝ պղնձայրերի հետ: Երաշտն ու անժամանակ անձրևը ոչինչ չեն թողել: Ուղղակի սարսափելի է Վերին-Ղափանի հինգ գիւղերի վիճակը, ուր ամբողջ տարվայ բերքի մեծ մասը դեռ արտերում ու կալերում թանձր ձիւնի տակ է մնացել: Արծւանիկի կողմերում՝ Զափնի, Ըրկենանց, Սեաքար, Նորաշէնիկ, Արծւանիկ շատ քիչ բան կայ: Ողջ Ղափանում այս տարի շատից-քչից բաւարար բերք են ունեցել Խոտանան, Շրւենանց, Խլաթաղ և Առաջաձոր գիւղերը: Առանձնապէս յիշատակելու է Տօրթնի գիւղի հայերի (գիւղի մեծ մասը թուրքեր են) ողբալի դրութիւնը, որ ընդհարումների ժամանակ հեռանալով գիւղից, այժմ երբեմնի չէն տների աւերակներում պատսպարված, բաղդի կամքին են թողնված:

Այսպէս ամբողջ Ղափանում չարքաշ գեղջուկը մի ամբողջ տարի արիւն-քրտինք է թափել ու այսօր հաց չունի ուտելու: Սովորական տարիներում այնքան էլ արհաւրալի չէր լինի այս տխուր պատկերը. ինչ խօսք, պղնձված երկինքը այս առաջին անգամը չէ պատժում հողագործ մշակին. սակայն այսպիսի տարիներում, ճիշտ է, հաց չէր լինում, բայց կար ապրանք, տնամէջ, հուժկու բազուկներ, յուսոտ սիրտ, ունէր հարևան, աշխատանքի աղբիւրներ, ու այդ մի տարին գիւղացին ինքն էլ չը գիտէր, թէ ինչպէս է անցնում: Սակայն այժմ... էլ հալ չը կայ... Երեք տարի շարունակ մի կերպ քաշ է տուել իր գոյութիւնը լուսաւոր ապագայի յուսով, երեք տարում ամեն ինչ զոհ բերել. այժմ լոկ մի-մի պատառոտուն, քրտնաշաղախ կտաւէ հալաւ է մնացել...

Հայ-Թուրքական աւերիչ ընդհարումներ, ինքնապաշտպանութեան կլանած արնածոր գումարներ, հարեւան Թուրք գիւղերի կողքին խոպան մնացած ամենապտղատու արտեր, երկարատեւ դաժան ձմեռներ, երաշտ, կարկուտ, աշխատանքի աղբիւրների յանկարծակի սպառում, այդ բոլորից յետոյ գեղջուկի ամենամեծ դարդը՝ տաւարի համաճարակը,—ահա արհաւրալի աղէտներ, պատուհաս, որ գիւղացուն հարուածեցին հէնց գլխից, ուժասպառ արին, ու կեանքի նպատակը կորաւ նրա համար. այլ նպատակ չունի նա այժմ, լոկ հաց, հաց է հարկաւոր, հաց պիտի ձեռք բերել, տկլոր, չուլ-փալասից զուրկ, կորցրած կով ու եզ՝ հացի ետեւից է. դպրոց, առաջադիմութիւն, հոգու ու սրտի այլ պահանջներ յետին շարքերն են անցել. այժմ մենակ հաց է հարկաւոր:

Միջոցը նպատակ է դարձել...

Եւ մի անօրինակ յուսահատութեան մէջ հոգեվարքի օրեր է ապրում Ղափանը. ապրուստ չը կայ, աշխատանք չը կայ, իսկ միւս կողմից ժողովում են ամենայն խստութեամբ մի ամբողջ տարվայ հարկը, զանազան տուգանքներ...

Աշուն է, վար ու ցանքի օրեր. արտեր են մշակել, խրամահատներ. բացել ամեն տարի այս օրերին մեր խոր ձորերն ու չըքնաղ անտառները արձագանք էին տալիս խրախուսված գեղջուկի կենսաթրթիռ հօրովելներին, ու օրվայ հսկայական աշխատանքից յետոյ սրբում էր ճակատից ծլլացող քրտինքը առանց յոգնութիւն զգալու: Այժմ սև է պատել մեր գիւղերին. մի տեղ սերմ չը կայ հողը ձգելու, այլ տեղ եզ չը կայ վարելու. իսկ հոկտեմբերի կէսին եկած արշինաչափ ձիւնը, մի չը տեսնված պատուհաս անսիրտ երկնքից, լուծը արօրին է թողել, մաճն անտէր, հողագործի վիզը ծուռ, ձեռը ծոցին, արցունքն աչքին: Ուրիշ ճար չունի գիւղացին, ծախելու բան չը մնաց, երկինքն էլ խռովել՝ օր չէ առնում, ու նա կոբեկ-հացը մէջքին կապած, տուն-տեղ, զաւակ, կին Աստուծուն պահ տուած՝ դիմում է Բագու... Դատարկվում են մեր գիւղերը. գնում են փող աշխատեն, ալիւրի տան, տուն ղրկեն, ու այստեղ զուր են սպասում, թէ էսօր-էգուց ալիւր, փող կը գայ. գնացողներն անգործ են, գործ չը կայ:

Իսկ սովը արդէն երկրագործի դուռն է բաղխում... Եւ ո՞վ է քաղցած. ղափանցի այն գեղջուկը, որի համար ազիզ, հանգստի օր չը կայ, որ աշխարհիս երեսին իր կեապօղ եզն ու երկճիւղ մաճն է ճանաչում, տարին բոլոր ճաքճքված, ջլոտ ձեռքերով հաց հանում անհամբոյր ու ժլատ երկրից, քրտնում շարունակ, տնքում անվերջ: Սովված է Ղափանի այն բանւորը, որ պղնձահանքերի մութ ու խոնաւ այրերում, ցեխ ու մրի մէջ շաղախված, կեանքի գնով կռիւ է մղում ապառաժների հետ՝ պատառ կոբեկ հացի համար սև կօպէկ վաստակելու: Հաց է ուզում այն երկաթէ աշխատաւորը, որ ցուրտ-ձմրան, երբ բուք-բորանն է ոռնում ողջ բնութեան մէջ, մինչև ծունկ ձիւնի մէջ, սառնամանիքից դողացող անտառում ծառեր է կտրում քափ-քրտինք մտած, ծառեր մանրում, օրն ի բուն խախա-խախտ լինում կոճղների հետ, ածուխ պատրաստում, անում, աշխատում միայն ցամաք հացի յուսով, և այն՝ ոչ կուշտ փորով:

Տնտեսական ծայրայեղ քայքայումը աւեր է փռում մեր գիւղերում. հացի սովից աւելի՝ կարող, անձնուէր, ինտելիգենտ ույժերի զարհուրելի սով է, մարդկանց սով, որ գիւղերն անցնեն, ցաւը տեղն ու տեղը տեսնեն, անգիր ու անլեզու գեղջուկի խեղդված հառաչանքը բարձր հնչեն, կազմակերպեն օգնութեան գործը, դիմումներ անեն, սիրտ տան մտամոլոր, շիւար գիւղերին: Անձնազոհ ույժերի այդ ցնցող սովն է մահացունչ, խեղդիչ...

Ձեռքից գնում է մի ամբողջ վիճակ. պիտի շտապել օր առաջ օգնութեան հասնել. գիւղացին էլ դիմանալու ույժ չունի, էլ արիւն չը մնաց նրա երակներում:

Որքան դաժան ու սրտամաշ լինի չարատանջ հայրենիքի ընդհանուր պատկերը, որքան աղաղակող կարիքն ամենուրեք, սակայն չը պիտի մոռանալ, որ ցաւերից ամենամեծն է բաժին ընկել Ղափանին:

Ժողովուրդը, կառավարութեան արած անվերջ դիմումների կարուկ մերժումից յետոյ, աչքը Նպաստամատոյց Յանձնաժողովին է սևեռել, այնտեղից է օգնութիւն սպասում: Պիտի շտապել. օրերով է բարձրանում արժէքի գինը. գիւղերում ցորենի մարդանը (մօտ 1 պ. 30 ֆ.) չորս րուբլի է (սակայն ծախող չը կայ, թէկուզ 14 ր. տաս), մի գին, որ ծերերը չեն յիշում իրանց կեանքում տարվայ այս միջոցին. հերու սովին՝ միայն մայիս ամսին այդքան բարձրացաւ, իսկ ինչ կը լինի առաջիկայ մարտ, ապրիլ, մայիս ամիսներին...

Շուտափոյթ ու կազմակերպված օգնութիւն,—ահա թէ ինչը կը փրկի Ղափանը սովամահից:

Արքայիկ

ՀԱՍԱՆ-ԲԷԿ ՄԵԼԻՔՕՎ

—

Բագւում նոյեմբերի 28-ին վախճանվել է առաջին Թուրք պարբերական «Աքինչի»-ի (Երկրագործ) խմբագիր-հրատարակիչ և առաջին Թուրք հրապարակախօս Հասան-բէկ Մէլիքօվը, որ 30 տարի առաջ Բագուի ռէալական դպրոցի բնական գիտութիւնների ուսուցիչ էր:

Թուրք ազգի լուսաւորութեան գործի մէջ Մէլիքօվը նշանաւոր դեր խաղաց, հետեւաբար նրա մահը զգալի պէտք է լինի Թուրք ինտելիգենցիայի համար, որի ղեկավարն էր հանդիսանում նա և մինչև վերջերս իբրև «Каспій» թերթի գլխաւոր ղեկավարներից մէկը:

Մէլիքօվը առաջինն եղաւ, որ հասկացաւ ժողովրդական լեզուի նշանակութիւնը Թուրք մասսայի համար և Թուրք առաջին թերթը հրատարակեց ոչ թէ պարսկերէն կամ արաբերէն, այլ ժողովրդական լեզուով, Թուրքերէն, որ աշխատեց մշակել:

Եւ դեռ խոպան, անմշակ Թուրք լեզուն այսօր եթէ մշակվել է և նրանով հնարաւորութիւն կայ լրագիրներ, գրքեր և նոյն իսկ գիտնական գրքեր հրատարակել, այդ ամենը մեր երկրի Թուրք կամ Թաթար ժողովուրդը պարտական է գլխաւորապէս Մէլիքօվին:

Հ. Ա.

ՄԻ ԳԵՂԵՑԻԿ ԳՈՐԾ

—

Անցեալ կիրակի իմ ծանօթիս թաղումն էր Ջգրաշէնի եկեղեցում. պատարագի ժամանակ իմ ուշադրութիւնս գրաւեցին բակում խաղացող երեխաների ուրախ ձայները. հետաքրքրվեցի և դուրս եկայ եկեղեցուց. մօտ հարիւր յիսուն աշակերտուհիներ 14-ից մինչև 45 տարեկան խօսում և խաղում էին. այդ՝ կիրակնօրեայ դպրոցի սանուհիներն էին, որոնք շաբաթը մի անգամ այդտեղից ստանում են իրանց մտաւոր պաշարը, սովորում կարդալ-գրել հայերէն և ռուսերէն, թուաբանութիւն, երգեցողութիւն, զրուցատրութիւն զանազան առօրեայ հարցերի մասին. դրանք կեանքի այն խորթ որդիներն էին, որոնք քօռ բաղդի որոշմամբ հեռու էին մնացել դպրոցից: Այժմ դրանք՝ մեր քաղաքի չքաւոր և տգէտ դասակարգի զաւակները՝ մեծ եռանդով սովորում էին իրանց դասերը. ես մտայ և ուսուցչանոցը. մօտ 30 ուսուցչուհիներ ուրախ-զուարթ՝ այս ու այն կողմն էին վազվզում զանազան յանձնարարութիւններ կատարելու. չէր երեւում դրանց մէջ ոչ պաշտօնական վերաբերմունք միմեանց հետ, ոչ մէկի կամ միւսի գերազանցութիւնը և ոչ անբաւականութեան մի նշան. բոլորն էլ այդ գործը համարում էին իրանց սեփականը, բոլորն էլ իրանց զգում էին ազատ գործելու մէջ: Երևաց, որ այդ նոյն անձինք, ստանալով քաղաքից նպաստ միմիայն 150 ր., տալիս են դրանց ձրի թէ ուսումնական պիտոյք, թէ բժշկական օգնութիւն և թէ դրանցից ընդունակներին սովորեցնում արհեստ՝ կար ու ձև. ծախսում են տարեկան մօտ 900 րուբլի, որը լրացնում են ծանօթ շրջաններից հաւաքած նպաստներով և տարէնը մի անգամ տրված ներկայացումից ստացված օգուտից:

Ահա այդ ներկայացումն է, որ այսօր տալիս են այդ դպրոցի ուսուցչուհիները, ժողովարանի դահլիճում, որից և կախված է դպրոցի վիճակը. յուսով ենք, որ հասարակութիւնը չի զլանայ իր լուման ձգելու այդ սիրուն գործի գանձարանը. Ներկայացմանը մասնակցում են մեծ մասամբ այդ դպրոցի ուսուցչուհիները:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Թիֆլիսի տնայնագործական ընկերութիւնը այս ամսվայ վերջին կը կազմէ մի երեկոյթ իր օգտին: Երեկոյթը խոստանում է հետաքրքրական լինել: Նա բաղկացած կը լինի երկու մասից՝ մանկական և հասակաւորների բաժնից: Մանկականը ունի հարուստ ծրագիր՝ տօնածառով, սինեմատօգրաֆով և բազմատեսակ խաղերով: Երեկոյթը նշանակված է կիրակի, դեկտեմբերի 30-ին, Թիֆլիսի ժողովարանում:

◆ Վաղը, երկուշաբթի, Թիֆլիսի արքունական թատրոնում ներկայացվելու է «Աիդա» օպէրան, մասնակցութեամբ Վենչենցո Կօպպօլօի, ի նպաստ բարձր կուրսերի ուսանողների և ուսանողուհիների: Անկասկած ներկայացման համակրելի նպատակը պէտք է գրգէ հասարակութիւնը, գեղարուեստական հաճոյքի հետ միացնել և բարեգործական հաճոյքը, որ միջոց կը տայ օգնել մի քանի չքաւոր ուսանողների և ուսանողուհիների:

◆ Մինչև օրս Ճավճավաձէի անունով հիմնվելիք ֆօնդի համար՝ վրաց մէջ գրագիտութիւն տարածող ընկերութիւնը զանազան հաստատութիւններից և անձերից ստացել է ընդամենը 2636 ր.: Եթէ այս գումարին աւելացնենք մի քանի երեկոյթներից գոյացած արդիւնքները, կը ստացվի 3000 րուբլուց աւելի:

◆ Կովկասեան կայսերական բժշկական ընկերութեան անդամներից մի քանիսը մտադրել են մի շաբաթաթերթ հրատարակել, նուիրված բացառապէս կովկասեան բժշկութեան: Շաբաթաթերթում տպվելու են Կովկասի բժիշկների ինչպէս գիտական յօդուածները, այնպէս և բժիշկների այն ընկերութիւնների նիստերի արձանագրութիւնները, որոնք իրանց աշխատանքները չեն հրատարակում: Այդ շաբաթաթերթի նախահաշիւը և ծրագիրը մանրամասնօրէն մշակելու համար ընտրվել է մի յատուկ մասնաժողով, որի կազմի մէջ մտնում են բժիշկներ՝ Վիրսալաձէ, Ֆիշէր, Խատիսեան, Արծրունի, Իստամանով և Մուխարբեկով:

◆ Անդրկովկասի երկաթուղիների կառավարիչը մի խառն մասնաժողով է կազմել, որին առաջարկել է քննել ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութեան այն կարծիքը՝ թէ Անդրկովկասի երկաթուղիների կառավարիչը ժամանակին չէ՞ գտնում, արդեօք, վերացնել զինուորական պահպանողութիւնը երկաթուղագծերից: Յիշեալ մասնաժողովի նիստը նշանակված է դեկտ. 5-ին: («Ք.»):

◆ Թիֆլիսի էլեկտրաքարշի անօնիմ ընկերութիւնը, զիջանելով Նաւթլուղցիների խնդիրքին, եռանդով սկսել է կառուցանել էլեկտրաքարշի գիծը Կախեթինսկի ճանապարհից մինչև Նաւթլուղ և հասցնելու է մինչև քաղաքային սպանդանոցը:

◆ Մեզ խնդրում են տպագրել հետևեալը. «Գերմանիայում մանկավարժութիւն սովորող մի հայ ուսանողուհի, որը ուսումը աւարտելու է մի տարուց յետոյ և ապագայում իրան նուիրելու հայ մատաղ սերնդի կրթութեան գործին, միջոցների սղութեան պատճառով սեփպված է օգնութիւն խնդրելու ունևոր անձերից ամսական 10—15 րուբլի: Հասցէն՝ «Մշակի» խմբագրատուն»:

◆ Բագուի սանիտարական գործադիր մասնաժողովի տեղեկութիւններից երեւում է, որ ներկայումս խոլերա չը կայ ինչպէս քաղաքում, այնպէս և նաւթահանքերի րայօններում: Որոշում է կայացել փակել խոլերայի բարակները և արձակել ծառայողներին: Թողել են միայն երեք ախտահանիչների:

◆ Բագւում՝ բօրսայի մէջ, «Рус. Сл.» լրագրի ասելով, կայացել է տեղական վաճառականների, նաւթարդիւնաբերողների և առեւտրական ֆիրմաների ներկայացուցիչների ժողովը խորհրդակցելու վերջին ժամանակներս մագազինների և գրասենեակների վրա յաճախակի կատարվող զինված յարձակումների դէմ մաքառելու ձևերի մասին. ընտրված մասնաժողովին յանձնարարված է հեռագրով դիմել Ներքին գործերի մինիստրին և Փոխարքային՝ բողոքելու Բագուի ոստիկանութեան գործունէութեան դէմ, որը միջոցներ չէ ձեռք առնում էքսպրօպրիացիաները վերջացնելու համար:

◆ «Մշակի» № 171-ի վերջին տեղեկութիւնների բաժնում մի սխալ է մտել. տըպված է՝ երբ գնացքը խորտակվել է Աղստաֆա կայարանին չը հասած, պէտք է լինի՝ «գնացքը խորտակվել է Սաղախլո և Ախտալա կայարանների միջև»:

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Նոյեմբերի 30-ին, երեկոյեան ժամը 5-ին, Բակլինսկի փողոցում բնակվող Թիֆլիսի կօնտրօլնի պալատի վերաքննիչի աւագ օգնական Գր. Գօրօլեվիչը (42 տարեկան), ատրճանակից կրակելով իր սրտի վրա, ինքնասպանութիւն է գործել: Ինքնասպանութեան պատճառը առ այժմս չէ պարզված: Դիակը ուղարկված է հիւանդանոց:

—

Սիմոնովսկի շէնքում բնակվող Դարիա Մինկովան յայտնել է ոստիկանութեանը, որ նոյեմբերի 30-ին, երեկոյեան ժամը մօտ 7-ին, նրա բնակարանը մտել են 4 զինված չարագործներ և պահանջել են տալ իրանց՝

փող և ատրճանակ, բայց որովհետև Մինկօվան չէ ունեցել ոչ փող և ոչ ատրճանակ՝ կողոպտիչները վիրաւորել են որսորդական հրացանը և արծաթէ զանազան իրեր 72 ր. արժողութեամբ և անյայտացել են:

ՄԱՄՈՒԼ

Երէկվանից Թիֆլիսում սկսեց հրատարակվել մի նոր հայ օրաթերթ՝ «Անկախ Մամուլ», որի խմբագիր-հրատարակիչն է տ. Վ. Աթանասեան: Ի հարկէ, որևէ խօսք ասել նոր թերթի ուղղութեան և համոզմունքների մասին՝ վաղաժամ է:

Ինքը նոր թերթը այսպէս է ձևակերպում իր գոյութեան raison d'être-ը:

Այսօր լոյս է տեսնում մի նոր օրաթերթ՝ «Անկախ Մամուլը»:

Սրանից մի քանի տարի առաջ ոչ միայն նոր օրաթերթի, այլ նոյնիսկ որևէ պարբերական հրատարակութեան լոյս աշխարհ գալը կը համարւէր հասարակական մի խոշոր երևոյթ: Սակայն այժմ այդպէս չէ:

1905 թւականը ուրիշ շատ նւաճումների հետ բերեց մեզ և մամուլի, գոնէ հրատարակութեան իրաւունքի տեսակէտից, ազատութիւն...

Անա այդ ձևական ազատութիւնից օգտւելով՝ մի խումբ հայ գրական և լրագրական գործիչներ հրապարակ են իջնում «Անկախ Մամուլ»-ով:

Այո, անկախ, որովհետև գուցէ երբէք հայ հասարակութիւնը այնքան զօրեղ կերպով չէ զգացել խիկայէս մի անկախ լրագրի կարիք, որքան այժմ, երբ շնորհիւ կուսակցական և խմբակցական երբեմն շատ նեղ հասկացւած շահերի՝ աշտաւոր ժողովրդին վերաբերող իրաւական-տնտեսական բազմաթիւ խնդիրներ կամ բոլորովին լռելու կամ, որ աւելի ցաւալին է, իրանց ոչ ճարազատ գոյնով լուսաբանւելու վտանգին են ենթարկւում:

«Անկախ Մամուլը», թարգման հանդիսանալով ժողովրդական այդ ընդհանրացած տրամադրութեանը, դուրս է գալիս անկախ մնալու, անկախ մտածելու որոշումով:

Գիտենք, դժւար կը լինի նրան պաշտպանել իր անկախութիւնը զանազան ուտրնձգութիւններից, բայց նրա շուրջը բոլորողները համոզւած են, որ իրանց քարոզած սկզբունքները, անկեղծ ու շիտակ խօսքը վերջ ի վերջոյ կը հարթեն այդ դժւարութիւնները և ժողովրդական լայն խաւերի մէջ կը բացեն իր համար ճանապարհ, որովհետև նա ունի իրան նշանաբան՝—«Ամեն բան գիտակցող ժողովրդի միջոցով, գիտակցող ժողովրդի համար»:

Մեր կողմից կատարեալ աջողութիւն ենք ցանկանում մամուլի այս նոր օրգանին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

(Քաղուածներ լրագիրներից)

Անդրանիկ Իօանեսքուի կտակի գործադրութեան խնդիրն ուսումնասիրելու համար Կ. Պօլսի պատրիարքարանէն ընտրուած յանձնախումբն իր տեղեկագիրը ներկայացուցեր է խառն ժողովին, որ վաւերացուցեր է տրուած որոշումը: Ժողովը համաձայն է, թէ Իօանեսքուի քոյրը պահանջներ ընելու օրինական իրաւունք չունի, բայց յանձնախմբի առաջարկին համեմատ որոշեր է «իբր կամաւոր տուչութիւն» հարիւրին 25 տալ կտակէն գոյանալիք զուտ արդիւնքէն, պայմանով որ նա ալ դադրեցնէ քաղաքային իշխանութիւններին առջև իր բացած դատը:

Թուրք գրաքննութիւնը Հայաստան անունը կրող բոլոր աշխարհացոյց քարտէզները պատառ հաներ է՝ անգլիական և օտար աստուածաշնչական ընկերութեան կողմէն մեծ քանակութեամբ վերջերս Բաղդադ ղրկուած ամեն մէկ Աստուածաշունչի մէջէն: Անգլիական հիւպատոսարանի թարգմանը բացատրեր է այդ ընկերութեան, որ աշխարհացոյցների վրայ «Հայաստան» բառը արգիլուած է Թիւրքիայի մէջ:

Թուրքիոյ ամեն կողմերէն եկած լուրեր կը հաստատեն, թէ հայ ժողովուրդը պարտաւոր կը զգայ տիրող դժբաղդ պայմաններու շնորհիւ թողուլ հայրենիքը ու գաղթել օտար երկիրներ: Թղթակից մը կը գրէ թէ միայն մէկ օրուայ մէջ վերջերս 40 անձինք Խարբերդէ ճամբայ ելան Միաց. Նահանգները գալու:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

(Թիւրք-պարսկական սահմանագլխից)

Սօվուջբուլաղ, 2 նոյեմբերի

Խառն ու փոթոր ժամանակների մէջ ենք ապրում դարձեալ: Զօրք է գալիս, զօրք գնում, շարունակ զօրաշարժ, բայց կռիւ դեռ չէ եղել և, մեր կարծիքով, չի էլ լինի: Այս բոլորի պատճառը երեք քիւրդ աղաներ են մանկուր ցեղից. այդ աղաները կոչվում են՝ Բաքիր աղա Մանկուր, Համադ Բաքիր աղա Մանկուր և Բայիզ աղա: Առաջին երկուսը հօրեղբօր որդիներ են, իսկ վերջինը՝ առաջին երկուսի հօրեղբայրն է: Մի քանի տարի առաջ Բայիզ աղան Թիւրքահպատակութիւն ընդունելով՝ անցաւ սահմանից Թիւրքաց կողմը: Իր գիւղերի ամբողջ խումբը կոչվում էր Հին-Լահիջան: Թիւրքաց կողմը անցնելուց յետոյ իր գիւղերը գրաւեցին իր հօրեղբօր կողմից: Մինչև այդ ժամանակ մանկուրների ցեղապետն էր Բաքիր աղան, որ իր մասնաւոր ծառայութիւնների համար շահից ստացել էր «Սալար-ի-Աշայիր» (աշիրաթների սալար, սպարապետ) տիտղոսը: Վերջին ժամանակներս իր հօրեղբօր որդին՝ Համադ Բաքիր աղան, որ տարիքով շատ ծեր է Բաքիր աղա Սալար-ի-Աշայիրից, միտքը դրեց, որ ինքը պիտի լինի ցեղապետ, և մի քանի հարիւր ձիաւորներով յարձակվեց ցեղապետի վրա, յաղթեց և նրա գիւղերին տիրելով՝ խրացրեց: Ցեղապետ Բաքիր աղան յանկարծակիի գալով՝ յաղթվեց և փախաւ մտաւ քաղաք՝ Սօվուջբուլաղ, այստեղից դիմեց շահի օգնութեան: Մանկուրները քիւրդ ցեղերից ամենաքաջը և ամենակռուարարն են: Մի անգամ յաղթվելով՝ նրանք իրանց ստացւածքից ձեռք չը պիտի քաշէին. դա ամօթ էին համարում իրանց «մանկուր» անուան: Մանկուրների ասելով՝ իրանց առաջին ցեղապետը եղած է «Մամքան» անունով մի քաջ աղա. դրանից ենթադրվում է, որ «Մամքանը» պէտք է լինի «Մամիկոն», Մամիկոնեան ցեղից, և հէնց իրանք էլ ասում են, որ իրանց առաջին պապը եղած է մի հայ: Իրանց աչքերն ու քիթը, ամբողջ ֆիզիօնօմին, կատարեալ հայի դիմագիծն ունեն: Համադ Բաքիր աղան քանի-քանի անգամ սօվուջբուլաղցիներին սուֆարիշ (բերանացի պատգամ) ուղարկեց, որ Բաքիր աղային քաղաքից դուրս հանեն, բայց պետութիւնը պաշտպան կանգնեց Բաքիր աղային՝ նրա և նրա մարդկանց կանխիկ փող և ցորեն տալով (տարեկան 300 թուման փող և 150 խարվար ցորեն էր տրվում իրանց): Երբ պարսից պետութիւնը պաշտպան կանգնեց Բաքիր աղային, Համադ Բաքիր աղան էլ վրէժը լուծելու համար գնաց «դախիլ» եղաւ օսմանցիներին՝ այսինքն մի տեսակ հպատակութիւն ընդունեց: Թիւրք կառավարութիւնն էլ քաջալերեց թէ նրան և թէ Բայիզ աղային, որոնք իրանց ձիաւորներով աւազակային արշաւախմբեր կազմելով սկսեցին ճանապարհորդներին կողոպտել, քարաւանների ապրանքները տանել և գիւղերը թալանել:

Շահին հաւատարիմ մնացած աղաները, տեսնելով որ իրանց գիւղերը շարունակ թալանվում են Համադ Բաքիր աղայի և Բայիզ աղայի մարդկանցից, կամաց-կամաց իրանք էլ մէկը միւսի ետևից անցնելով Թիւրքիայի կողմը՝ «դախիլութիւն» յայտնեցին: Իրանց այս քայլը ոչ թէ Թիւրքերին աւելի սիրելու համար էր, այլ ուղղակի ինքնապաշտպանութեան համար: Շարունակ էլ նամակներ էին ուղարկում այս կողմի աղաներին թէ՝ «Եկէք, անցէք այս կողմը. մենք շատ ենք. եթէ չը գաք, ձեր գիւղերը պիտի թալանենք»: Եւ իրաւ որ թալանում էին: Առաւօտ չէր լինում, որ լուր չը գար, թէ գիշերը այս-ինչ աղայի այս-ինչ գիւղերն են թալանել և կամ այս-ինչ տեղում կռիւ լինելով այսքան թւով մարդիկ են սպանվել: Համադ Բաքիր աղա Մանկուրի հետ միացել են նաև մամաշ և գէօվրիկ ցեղերը: (Ասում են, որ գէօվրիկներն էլ Գեօրգ անունով մի հայից են ծագել, որ այդ ցեղի առաջին ցեղապետն է եղած): Այս կողմից էլ Բաքիր աղան, որ քաղաքումն էր, շարունակ կառավարութիւնից թոյլտւութիւն և օգնութիւն էր խնդրում, որպէսզի գնայ Համադ Բաքիր աղայի հետ կռւելու և նրան սպանելով իր կորցրած գիւղերին տէրէ և դարձեալ ցեղապետ լինի և կամ պատւով մեռնի և իր մարդկանցով փչանայ: Մի անգամ առիթ ունեցայ մի տեղացի բարեկամի հետ գնալու այս հռչակաւոր ցեղապետին (Բաքիր աղային) տեսութեան: Շատ առողջ և հաստ կազմուածքով մի պատերազմիկ է նա, թէև կարճ հասակով: Շատ համակրելի մի դէմք ունի և չափազանց քաղաքավարի է իր հիւրերի հետ: Սենեակում նստած էին նաև իր ստորադրեալ աղաները, իսկ ոտքի վրա կանգնած էին 10—15 զինված քիւրդ ծառաներ: Սրանցից իւրաքանչիւրն իր վրա կրում էր 100—150 փնդակ, բացի մի խենջարից և բռվօլվերից: Իսկ դուրսը, դահլիճում, կային 20—30-ի չափ էլ ուրիշ ծառաներ, դարձեալ զինված, և բակում իրանց ձիերը թամբած ու պատրաստ՝ եթէ կռուի պէտք լինի: Մեր խօսակցութեան նիւթը մեծ մասամբ ռուս-ճապօնական պատերազմի մասին էր: Տնաքանդները կռուի մասին այնպէս էին խօսում, որ կարծես թէ հարսանիք պէտք է գնան: Պատրաստվում են այս օրերում Համադ Բաքիր աղայի հետ մի անգամ ընդհարվելու: Այսպիսի խաղաղ կեանքն իրանց համար շատ տխուր է անցնում: Կամ կը գնան, կը մեռնեն և կամ դարձեալ կիշխեն: Պետութիւնից ձրի հաց ասնել-ուտելն իրանց համար պատիւ չեն համարում, թէև առ այժմ ստիպված են ենթարկվել այս տհաճոյ պայմաններին: Շրջակայ քիւրդ աղաներին հրաման է ուղարկված Սօվուջբուլաղի նոր կառավարիչ Սարդար-ի-Մուխթադիր Սամադ-խանից, որպէսզի իրանց ձիաւորներով և հետևակ հրացանակիրներով քաղաք հասնեն՝ ապստամբ Համադ Բաքիր աղա Մանկուրի դէմ գնալու համար: Այս շաբաթ շարունակ զինված զօրքեր են որ գալիս են քաղաք: Քաղաքում վարձելու համար դատարկ տուն կամ քարվանսարա չէ մնացել: Կռուի մասին կը գրեմ:

Տ. Սիւնի

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԻՒՍԱՄԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ՌՆԴՈՒՆՈՒՄ ԵՆ՝
Բ. Ա. ՆԱԻՍԱՄԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.:
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային:
ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Ե. Կ. ԽՕԴՆԵՎԱ—9½—2 ժ. ատամի հիւ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Մ. Գ. ԱԻԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., միզաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒԼԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.:
Կ. Ի. ԳՋԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի:
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.:
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան:
Գ. Յ. ԳՈՒՐԳԵՆՕՎ—11—12 ժ. կանանց և մանկաբարձութեան:
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Յ. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.
Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ
Հայ դերասանական ընկերութիւնը
Երկուշաբթի, դեկտեմբերի 3-ին,
Արտիստիկ ընկերութեան թատրոնում
Մասնակցութեամբ դեր. ԱԲԵԼԵԱՆԻ
Կը ներկայացնէ
ՀԱՅՐԵՆԻՔ
Դրամա 7 գործ., հեղ. Վ. Սարդու, թարգմ. Նեյեանի
Մասնակցում է ամբողջ խումբը
Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին:
(շ. կ.) 2—2

Իշխանութեան թոյլտւութեամբ Թիֆլիսում հիմնված է
Ատաղձագործների ՊՐՕՖ. ՍԻՕՆԱԼԻ ԻՐՕ,
որը վերցնում է ատաղձագործական աշխատանքներ չափաւոր գներով, համեմատ աշխատավարձի, կարգով և օրով. միևնոյն ժամանակ վերջին գները բաժանված են 4 կատեգորիայի: Բիւրօն երաշխաւոր է իր անդամների համար միայն այն դէպքում, եթէ պատուէրը տրված է իրան—բիւրօյին: III քաղաքամաս, Ռուսսկայա և Վանքսկայա փող. անկիւն, տուն Ներսիսեան դպրոցի, վերին յարկ, ամեն օր ցեր. 7—3 ժամը:
(կ.) 6—8

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԲԱՑ ՆԱՄԱԿՆԵՐԻ
ԽԱՆՈՒԹՈՒՄ
ՑԵՆՏՐԱԼ
ՓՕՍՏԿԱՐՏ
ՖԻՐՄԱ ԳՆՈՒՆԻ
ՍՏԱՑՎԵԼ ԵՆ զանազան տեսակ ընտիր բաց նամակներ, ալբօմներ, պասպարտներ և ուրիշ նորութիւններ: Մեծ քանակութեամբ գնողներին զիջում է անվում:
Միքայէլեան փող. № 22.
Ա. Սարգսեան
Հ. Յարութիւնեան
(շ. կ.) 3—4

Վաճառվում են Ե. ԹՈՓՉԵԱՆԻ խմբագրած
ԼՈՅՍ
1908 թ. պատկերազարդ, գունաւոր օրացոյցները
I Գրպանի օրացոյցը 308 երես, 12 պատկերներով և 15 առանձին բաժիններից բաղկացած ընդարձակ յաւելուածով. գինը 20 կոպէկ:
II Պատի օրացոյցը բացի սովորական յաւելուածից—(բոլորովին նոր բովանդակութեամբ)—ունի մի առանձին ծրի գրքոյկ—«Ժողովածու գրական և գիտական»: Տախտակը 8 գոյնով տպած՝ գիւղացիութեան և բանւորութեան էմբլեմները հայ կնոջ հետ և երեսը Գեորգ Չաւուշի պատկերը. գինը 40 կոպ.:
Գումարով գնողներին ձեռնտու զեղչ:
Դիմել՝ Թիֆլիս գլխաւոր պահեստը՝ «Գուտենբերգ» գրավաճառանոցը:
(կ. չ. ու.) 6—10

Զանգեզուր գաւառի Լ Օ Ր գիւղի նորաբաց ծխական ուսումնարանի համար
ՀԱՐԿԱՒՈՐ Է ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ
Պայմանների համար դիմել Балаханы, пром. „Воротан", Аствацатуру Іоаннисьянцъ.
(ա. օ.) 4—5

Լոյս տեսաւ
ԷՄԻԼ
«ԸՄԲՈՍՏ ԵՐԳԵՐ»
Բանաստեղծութիւն. 39 երես, 25 կոպ.:
Դիմել՝ Թիֆլիս, книжный магазинъ „Гутенбергъ".
5—5

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Այսօր, դեկտեմբերի 2-ին,
Ի նպաստ երկրորդ իգական կիրակնօրեայ դպրոցի հայոց բաժանմունքի
Հայ դրամատիկական սիրողների խումբը բարեհաճ մասնակցութեամբ դերասանուհի տիկին ՋԱՄՈՒԿԵԱՆԻ
Կը ներկայացնէ
ՋՕՐԱԽՄԱՂԻ ՄԻՋՕՑԻՆ
կօմեդիա 4 արար.
Մասնակցում են՝ տ. Ջամուկեան, օր. օր. Ղաչարդուզեան, Մելիքեան, Միքայէլեան, Գուլբենեան, Բիշմիշեան, պ. պ. Երամեան, Եզեկեան, Եսայեկեան, Մակարեան, Մաշիլեան, Յովհաննիսեան, Վանչիր, Տէր-Սաաքելեան, Փանոսեան, Փիրումեան և ուրիշ.: Խաղամիջոցներին և ներկայացման վերջը
ՎԻՃԱԿԱԽԱՂ
Կը ծախվեն ծաղիկներ, քաղցրաւէնիք, կօնֆէտի և այլն.
Ներկայացումից յետոյ ՊԱՐԵՐ
Տեղերի գինը 2 ր. 50 կ. մինչև 75 կ.
Սկիզբն է ճիշտ ժամը 8-ին երեկոյեան.
Առանձին տուքսի վճար չը կայ.
Տոմսակները վաճառվում են ժողովարանի շվէյցարի մօտ:
(շ. կ.) 2—2

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ
և վաճառվում են
„ԱՐԱՔՍ"
1908 Թ.
ՊԱՏԻ ԵՒ ԾՈՑԻ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ
հետաքրքիր և հարուստ բովանդակութեամբ:
Գները՝ պատինը արժէ 40 կ.
ծոցինը » 20 կ.
Դիմել՝ Александрополь, типографія Санояна. Թիֆլիսում պահեստը գտնվում է «Փարոս» գրախանութում Նիկ. Մատինեանի, Эрив. площадь. Գումարով գնողներին ձեռնտու պայմաններ:
(ե. հ. կ.) 26—11

Լոյս տեսաւ
Ս. ԴԵՄՈՒՐԵԱՆԻ
„ՔՆԱՐ"
երգարանը (եւրոպական նօտաներով): «ՔՆԱՐ»-ը բաղկացած է 106 երգ., մեծ մասը ժողովրդական երգերից. գինն է 1 ր.: Դիմել՝ Баку, Арм. школа, Гимназическая ул., Степану Демурянцу, կամ Моздокъ, С. И. Яралову, և կամ Петербургъ, ред. „Сапричъ", Окрояну. (օ.մ.) 24—30

ԲԺԻՇԿ
Ա. Միխթարեանց
Ընդունում է հիւանդներին. մասնագիտութիւն՝ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւններ. առաւօտեան 12—2 ժ., երեկ. 5—7 ժ., Սօլօլակ, Բեհբութեան փողոց № 33:
(ա. օ.) 52—100

ԲԺԻՇԿ
Գ. ՄԱՂԱՔԵԱՆ
Ներքին եւ երեխայոց, առանձնապէս ստամոքսի եւ աղիքների հիւանդութիւններ:
Ընդունելութիւն ամեն օր | 12—1 ժ. առաւօտեան, 5—7 ժ. երեկոյեան
Միքայէլեան փողոց տ. Ճավճավաձէի № 36.
(ա.օ.) 51—100

ԲԺԻՇԿ
Ս. Մ. ՄՕՆԻՆ
Մասնագէտ՝ սիֆիլիս, վեներական, միզանցքային և կաշու հիւանդութիւնների: Միզանցքի բորբոքում և ցիստօսկօպիա: Ցատուկ անալիզներ: Ընդունելութիւնը առաւ. 8—10 ժ. և երեկ. 5—8 ժ.: Կանանց և երեխայոց՝ 4—5 ժամը ցերեկվայ: Միքայէլեան փողոց, № 24, տ. Քարթվէլօվի, մուտքը Սեմեօնօվսկի փողոցից, № 4.
(կ.) 1—2

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
Վերադարձաւ Կովկասի հանքային ջրերից և վերսկսեց ընդունելութիւնը ներքին և ջղային հիւանդների, առաւօտ. 9—12 ժ., երեկ. 5—7 ժամ:
Միքայէլեան փողոց, № 27:
(ե. հ. շ. կ.) 32—50

ՈՒՍՈՒՑԻՉ
ՔԱՄԱԼԵԱՆՑ Ս.
տալիս է ՄԱՍՆԱՒՈՐ ԴԱՍԵՐ հայ լեզուից, հ. պատմութիւնից և հ. գրականութիւնից: Ցանկացողները պայմանների մասին դիմելու են՝ Միքայէլեան փող. № 82, բն. 9: Նոյն տեղ Քամալեան Ս.-ի հրատարակած 17 գրքերը (որ արժեն 4ր. 30 կոպ.) կարելի է ստանալ 3 ր. 20 կոպէկով. օտարաքաղաքցիների համար ճանապարհածախսով 3 ր. 80 կ.:
Եղ. Ամիչիսի «Աշակերտի յիշատակարանը» երեւում պատկերով, թարգ. դերմ. պատրաստ է տպագրութեան: Հարկաւոր է հրատարակիչ:
Պատրաստվում է «Էմմանուէլ Կանտի կենսագրութիւնը» դերմ. աղբիւրների հիման վրա:
(հ. կ.) 5—10

Կիրակի, դեկտեմբերի 23-ին 1907 թ.
ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿ. ԴԱՀԼԻՃՈՒՄ
ՅՕԳՈՒՏ
ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Տեղի կունենայ
ԾԱՂԿԱԶԱՐԴ ԵՐԵԿՈՅԹ
Կը ներկայացնեն օպերաներից մի քանի տեսարաններ հայերէն լեզուով.
I. «ԱՒԴԱ» օպերայից՝ II գործողութեան ա. պատկեր, մասնակցութեամբ տ. Ստեփանեանի, օր. Մելիք-Բաբախանեանի և սիրողների երգեցիկ խմբի.
II. «Տրուբադուր» օպերայից, IV գործ., մասնակցութեամբ տ. Սպենդիարեանի և պ. Նաֆտի Պալիեվի ղեկավարութեամբ:
ՎԻՃԱԿԱԽԱՂ, ԼՕՏՕ ԵՒ ՊԱՐԵՐ:
Խնդրում են բոլոր այցելուներին ծաղիկներ ունենալ. այս կարգադրութիւնը չը կատարողները ենթարկվում են 20 կոպէկ տուգանքի:
Դահլիճը շքեղ զարդարված կը լինի ծաղիկներով ու կանաչով. ծաղկեայ կիօսկներ և բուֆէտ:
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԽՈՒՄԲ
ԳՈՅՆԶԳՈՅՆ ՃԱՃԱՆՉՆԵՐ
Սկիզբը երեկոյեան ժամը 9-ին:
Տոմսակների գինն է 2 ր. 20 կ., ուսանողների համար 50 կոպ.:
Տոմսակները նախօրօք կարելի է ստանալ Արտիստական ընկերութեան կասսայում:
(2, 9, 12, 16, 20, 23) 1—6

Վաճառքի կայ զանազան տիպերի պատրաստի արձանների ահագին պաշար չափաւոր գներով, ինչպէս և ընդունվում են պատուէրներ մարմարեայ և մօզաիկ աշխատանքների
(շ. շ.) 1—10

Электропечатня «ЭКОНОМІЯ» Авакъ Мугдусіакоповъ съ С-ми. Большая Ванская ул. д. Семинаріи № 3.